



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1507


ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՈՐԾՎԱԿ

ԾԱՌԻԿԱՎՈՐ

613.97
2.25


4. ԴՐԱԿ  
1865



Առաջնահամար:

613.97  
Հ-25

17



222

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՅՈՒՂԱԲԵՐ

ՄԵՐՈՐՅԱՆ-ԻՆԺԻԿՅԱՆԻ


Ի 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 թ.

ԹԻՖԼԻՍ



ԵՐԻՑԱԽԱՐԴԱՅ ԱՐԴԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

**ԱՐՄԵՆԻԱ ՀԱՅՈՒԹԵԱՆ**



10098  
35748

Կ. ԳՈԼԻՄ

Ա. ՀԱՄԱԳՐԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԻՄԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ 43

( 1863 )

16304

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր հետեւեալ աշխատասիրութիւնը որ ահաւ ասիկ 'ի  
լյո կ'նծայենք՝ խիստ յուսալի է որ Հայ հասարակութեան  
ամեն մէկ անհատի ընդունելի լինի, վասն զի ազգայ-  
նոց մեծագոյն մասը այնքան սիրով ընդունեց մեր ասկէց  
առաջ հրատարակած ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ եւ  
ԳԱՂՏՆԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ անուն աշխատասիրութիւններնիս  
որքան որ՝ մենք չէինք յուսար 'ի սկզբանէ, կարծելովթէ  
Հայ ազգին մտաւորական կացութիւնը դեռ խաւարապատ  
է՝ մեր այս կարծիքը արդարեւ անհիմն ելաւ եւ փորձը  
յայտնեցթէ ամեն Հայ անհատ (բաց ի մէկ քանի հնա-  
սէրներէն) այսօր պատրաստ է ընդունիլ եւ խրախուսել  
որ եւ իցէ հեղինակութիւն որ իւր ընկերական եւ ընտա-  
նեկան օգտին եւ երջանկութեանը համար իրեն կ'տրուի .  
ուստի մենք որ ջանադիր եւ մտադիր եմք ամեն ճշմա-  
րիտ սկզբունք համարձակօրէնքարովել եւ հետեւաբար  
ընկերութեան օգտակար եղած ամեն գիտութեանց եւ  
ուսմանց հրատարակումներ ընել, առջիններէն խրախոյս  
եւ քաջալերութիւն առած այս անդամ եւս արդի հա-  
մառօտ սակայն խիստ օգտակար աշխատասիրութիւննիս  
հասարակութեան կ'նուիրեմք առանց ամենեւին տա-  
րակոյս ունենալու որ այս ալ առջիններուն պէս ընդու-  
նելի պիտի լինի :

Մեր հոգին եւ սկզբունքնիս ամենուն յայտնելու հա-  
մար հարկ է հոս յիշենք որ մենք բացէ 'ի բաց կ'մեր-  
ժեմք մասնաւոր անհատից եւ սովորական դրութեանց  
վատաբար հնազանդիլը, մեր միմիայն սկզբունքը հան-  
րութեան օգուտն է որոյ ծառսյել ինչպէս մինչեւ հիմա  
նոյնալէս ալ մինչեւ մեռնիմք պատրաստ եմք, վասն զի  
խիստ ստորին անասունէ մըն ալ նուաստ է նա՝ որ փո-  
խանակ իւր դտնուած ընկերութեան շահն ու երջանկու-

թիւնը մտածելու, գերի կ'վինի անհատի մը եւ նորա կամացն համեմատ կ'շարժի գուցէ (շատ անգամ) 'ի մեսաս հանրութեան։ կարծեմ հարկ չկայ այս անգամ դարձեալ կրկնել թէ մեր այս տեսակ աշխատասիրու։ թիւնները քանի մը տխմարներու կարծածին նման ամենեւին սլատմառ չեն կրնար լինիլ երիտասարդական անբարոյականութեան, այլ ընդհակառակը մինչեւ սյսօր այս նպատակաւ բռնուած ամեն ընթացքներէն եւ միջոցներէն խիստ աւելի զօրաւոր կերպով կրնան առաջնորդել երիտասարդութիւնը այնպիսի գիտութեանց եւ հմտութեանց որոց տէր լինելով միայն հնարաւոր է իրենց փրկութիւնը։ Եւ ինչպէս որ փոքրիկ տղայ մը կրակէն կ'զգուշանայ երբ փորձով առաջուցիրենյայտնուի կրակին կիզիչ զօրութիւնը, նոյնպէս եւս երիտասարդութիւնը պիտի հեռու կենայ իւր հեշտական մոլութիւններէն թէ որ անոնց կենասպառ բնութիւնը իրենց յայտնուի . . .

« Որքան ցաւալի է որ մենէ առաջ դժնուողները այս սկզբունքս չեն ընդունած » ըստ ինձ առջի աշխատասիրութիւններս կարդացող կիս-սպառած ազնիւ երիտասարդ մը հառաչելով։ յիրաւի մեծ իրաւամբ ըստ նա այս խօսքս, վասն զի թէ որ ասկէ գոնէ քառորդ դար առաջ « Տալութեաները բաշտքը և սկզբունքը ընդունուած եւ 'ի գործ դրուած լինէր փոխանակ « պղա գիճութիւնը եւ շնորհանը մեղք է, ամօթ է » քարոզուելուն՝ հիմա երիտասարդութիւնը այսքան խեղձ կացութեան մէջ չպիտի զըտնուէր :

Աւելայն ինչ ընեմք . եղածը եղած է, ուստի աշխատինք որ ասկից վերջը գոնէ մեր ասլաղայ սերունդը փրկելու համար հեշտական մոլութեանց ինչ սոսկալի սովորութիւնք լինելնին հասկընան եւ ուսանին ամեն երիտասարդ եւ կառավարեն ինքզինքնին ինչպէս որ օրինաւոր եւ վայելուչ է ամեն աղատ մարդու .

# ԴԱՐՅԱՆ ԾԱՂԻԿԻՆԵՐ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵՐԻՏԱՍԵՐԴԱՅ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՅ ԱՐԴԻ ԸՆԹԱՑՔԸ

“Նա որ մէկ քառորդ դար ուղիղ կը շարժի :  
Հարկաւ երեք քառորդ դար ալ պիտի շարժի :  
ԱՀՅՈԹ :

Արդարեւ անհնար է ուրանալ թէ Եւրոպա աշխարհիս միւս երեք մասերէն աւելի լուսաւորուած է, եւ Ամերիկան Եւրոպայէն աւելի . եւ ոչ ոք կարող է ուրանալ թէ ամեն արհեստ, գիտութիւն եւ ուսում իրենց արդի կատարելութիւնը Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ գըտան . անանկ որ այսօր աշխարհիս մնացեալ ամեն մասերը իրենց կարեւորութեանց մեծագոյն մասը անոնցմ, առնելու պարտաւորեալ են . այս ցաւալի եղելութիւնը որ շատ երկիրներու տնտեսական վիճակը դզրդեց, այն աստիճան յառաջ գացած է այսօր որ Եւրոպայէն եւ Ամերիկայէն զատ ամեն երկիր չէ թէ միայն իրենց անհրաժեշտ կարեւորութիւնները անոնցմէ ստանալու ըստիպուած են, այլ նաև այս պատճառաւ անոնց հետ մէկ տեղ այնպիսի սովորութիւններ որ որքան որ հեռի են Արեւելեան սլարկեշտութենէն նոյնքան ալ վնասակար եւ չարագուշակ են :

Ես ամենեւին չեմ կրնար ուրանալ այլ մանաւանդ կ'հաւաստեմ թէ՝ Եւրոպա եւ Ամերիկա արհեստից, գիտութեանց եւ ուսմանց մէջ մեզի խիստ օգտակար ծառայութիւններ ըրին եւ առանկով զմեղ մեր անտարբերութեան պատիժներէն փրկեցին, սակայն ասոնց հետ միատեղ անհնար է ուրանալ թէ նոքա մեզի շատ մըն ալ այնպիսի սովորութիւններ մատակարարեցին ու

րոնք բնաւ ներելի չեն տնտեսական օրէնքներու առջին ,  
սովորութիւններ՝ որոնցմով չէ թէ միայն անհատ մը՝ այլ  
ամբողջ երկիր մը կարելի է յետին աղքատութեան եւ  
թշուառութեան հասցնել :

Թողլով մէկդի անհամար վնասակար սովորութիւն-  
ները որ խալբախը մեր նախնիքներուն գլխէն ելած օրէն  
յետէ ընդունած եմք Եւրոպայէն եւ Ամերիկայէն, հիմակ-  
ուհիմա խօսիմք այն մէկ հատիկ դժոխային սովորու-  
թեան վրայ որ կ'կոչուի Նորասիրութիւն եւ տեսնեմք  
թէ այս Նորասիրութիւն կոչուած սովորութիւնը քանի  
աննկարագրելի եւ անթուելի առերջանկութեանց եւ  
թշուառութեանց պատճառ եղած է :

Նորասիրութիւնը ինչպէս իր անունէն կ'հասկցուի  
նոր բան սիրել կ'նշանակէ , եւ բացատրութիւն կուտայ  
քառորդ դարէ հետէ մեր մէջ մտած այն սովորութեան  
որով Ա. մեր անձերը չափէ դուրս գեղեցկացընելու դի-  
տաւորութեամբ պարտաւորեալ եմք այնպիսի հանդեր-  
ձանքներով զարդարուելու որ յարմար լինին ժամանա-  
կին ՆՈՐՈՒԹԵԱՆ (մօտա) Բ . կ'պարտաւորիմք այնպիսի  
խօսուածքի ոճ մը ունենալ որ ԲԱՐՁՐ եւ ՓԵՓՈՒԿ լինի .  
Գ . այնպիսի վարմունք մը կամ շարժական ընթացք մը  
որ յարմար լինի սովորական ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ :

Ա. Հանդերձներու նկատմամբ արդարեւ խիստ դըժ-  
ւարին է հոս կամ ինձ համար նկարագրել թէ որքան  
թշուառացուցիչ է Նորութեան հետեւիլը : ըստ որում  
փորձը յայտնած է թէ այս մոլութիւնը ամենահարուստ  
գերդաստանաց աղքատութեանը եւ ՎԱՏԱՀԱՄԲԱՒ-  
ԹԵԱՆԸ պատճառ եղած է , եւ մեծ համարձակութեամբ  
կրնամք ըսելթէ Քաղաքներու մէջ գտնուած աղքատ  
ընտանեաց մեծագոյն մասը Նորութեան այս ճիւղին  
սլատճառաւ իրենց արդի սրասատոչոր չքաւորութեան  
մէջ ինկած են . խսկ ասկից ալ աւելի համարձակութեամբ  
կարող եմք ըսելթէ անառակ կանանց խիստ մեծ մասը  
Նորութեան սիրահարներն են , որոնք իրենց վատահամ-

բաւ ընթացքին մէջ անգամ ոլ՝ այս մոլութեան պատճառաւ չեն կարող աղատիլ աղքատութենէ եւ թշուառութենէ :

Բ. Այս մոլութեան երկրորդ ճիւղին գալով այսինքն խօսելու Նորութեան արդարեւ շատ զարմանալու եւ վըտանալու սլատճառներ ունիմք . վասն զի հաղիւ թէ կարելի է երիտասարդ մը կամ օրիորդ մը գտնելոր սլարկեցութեամբ եւ օրինաւորութեամբ խօսիլ գիտնայ , անանկ որ մարդ կը տարակուսի թէ արդեօք խօսելէ առաջ խորհիլ կայ մի . այս մոլութեան մնասը սա է որ երիտասարդք եւ օրիորդք ամենեւին մէկզմէկու ըսածին չեն կրնար վստահիլ , այլ միշտ կասկած մը կունենան դիմսցիննուն անկեղծութեանը վրայ , որով եւ հետեւաբար ճշմարիտ մտերմութիւնը , սէրը եւ համակրութիւնը անհնար կ'լինի երկու անհատներու սրտերու մէջ գտնուիլը . եւ ասկից ալյայտնի է թէ որքան շարիքներ կրնան ծնանիլ . վարպետորդին կամ Նորութեան աշակերտը շատ դիւրաւ կրնայ խարել սլարզը եւ կործանել զայն եւ թշուառացնել . կամ երկու անհատ որ եւ իցէ կերպով մէկզմէկ խարելով կամ մէկզմէկէ խարուելով թէ ընտանեկան եւ թէ ընկերական գործի մը կամ վիճակի մը կրնան մտնել եւ յետոյ բնականաբար խարէութիւնը երեւան ելնելով անտանելի թշուառութիւններ յառաջ բերել , քանի քանի պարզ երիտասարդներ օրիորդի մը քաղցրանուագ եւ զարդարուն խօսուածքներէն հրապուրուելով իրենց կենակից ընտրած եւ ըրած են այնպիսի ճիւաղներ , որոնք հարսնութեան քողը վար դրածնուն պէս իրականապէս ինչ լինելին յայտնած եւ թշուառացուցած են զանոնք . նմանապէս քանի քանի ազնիւ օրիորդներ երիտասարդաց վարպետ խօսուածքներէն խարուելով թշուառ եւ անկրելի կեանքի մը նշաւակ եղած են . . . Վերջապէս այս մոլութեան մնասները մի առ մի ստորագրելը անկարելի է , վասն զի անոր պատճառաւ այսօր այնքան տեսակ թշուառութիւններ

յառաջ եկած են որ ոչ կարողութիւննիս եւ ոչ ոլ տեղերնիս կ'ներէ մանրամասնաբար նկարագրել, ոստի այս կէտիս վրայ ալ այս համառօտ տեղեկութիւննիս բաւական թող սեպուի :

Գ. Նորութէան երրորդ ճխղը որ արտաքին վարմունքներու նկատմամբ է, այն ալ յիրաւի շուարեցուցած է աշխարհս առ հասարակ. այս մոլութիւնս ալ վստահութիւնը զրեթէ բոլորովին վերցուցած է մեր մէջէն, վասն զի ասով ալ քանի քանի խարդախս մարդիկներ իրենց ճարապիկ եղանակներովն եւ կերպերովն շատերուն կենացը, ստացուածքին եւ պատոյն զրկանք ըրած են, ինչպէս ոչխարի մորթով ծածկուած գոյլերը կընեն կամ կրնան ընել անմեղ ոչխարաց. այս մոլութեան աշակերտներուն ալ արտաքին երեւոյթներնին եւ վարմունքներնին այնքան տարբեր են որ հազիւ կարելի է նկարագրել, բայց բաւական է թէ որ մեր նախահարց այս մասին վրայ մեզ աւանդած մէկ խօսքը յիշեմք որ է այս « որդեակ իր առջեւը նայողէն զգոյշ կեցիր » այսինքն հեռու սլահէ ինքզինքդ ամեն անոնցմէ որ խխա խոնարհութիւն եւ սրբութիւն կ'ցուցնեն . . . մէծ իրաւամբ խօսած են մեր հայրերը շիտակը . վասն զի փորձն անդամ անոնց այս խօսքը շատ անդամ եւ շարունակ մեզ յայտնելու վրայ է, մանաւանդ անոնց վրայ որոնք « կրօնքը իրենց անձին շահէն վեր դասող կուզեն քարոզել կամ ճանշցնել ինքզինքնին :

Վ. Երջապէս Նորասիրութեան ախտը երեք տարբեր եւ որոշ ճխղերով այնպիսի ցաւալի հետեւանքներու պատճառ եղած է, որ այսօր, անհնար է որոշել իրական գեղեցիկը՝ կեղծ կամ շինծու գեղեցիկէն, ճշմարտախօսը՝ ստախօսէն եւ անկեղծը՝ կեղծաւորէն, որով եւ հետեւարար երիտասարդութիւնը այսօր բոլորովին շւարեալ ինչ ընելիքը կորսնցուցեր եւ ուրիշ մոլութեանց ճանրան բռներ է, վասն զի խեղճերը որքոն որ կ'փափաքին ամուսնական եւ ընտանեկան կենաց մէջ մըտ-

նել, նոյնքան ալ կ'սոսկան երբ կ'խորհին թէ գուցէ, իրենց առած կողակիցը կարծածնուն չափ գեղեցիկ, համեստ եւ անկեղծ չ'ինի. նմանապէս երիտասարդուհիութիւնն ինքինքը կորուսեր է տեսնելով երիտասարդութեան իւր վերայ ունեցած անվստահութիւնը, անանկ որ երիտասարդ մը ինչ եղանակներով ալ որ երթայ օրիորդի մը քով, հարկաւ օրիորդը մեծ իրաւոնք սիմի ունենայ նորա անկեղծութեան վրայ չվրատահանալու, վասն զի անթիւ փորձեր համոզած են իգական սեոր թէ արականք անկեղծ չեն . . . վերջապէս անցեալ ամեն չարիքները որ Կորասիրութեան երեսէն մեր ընկերական վիճակը կրեր է, այսօր այնպիսի դիրքի մը մէջ դրած է դեռաբոյս սերունդը որ հազիւկրնան մէկզմէկու վրայ վստահանալ, եւ հետեւաբար թէ մէկզմէկու խարուելով եւ թէ մէկզմէկէ հեռուկենալով՝ ինքինքնին տուած են այնսիսի մոլութիւններու որոնք օր ըստ օրէ բնաջինջ ընելու վրայ են մարդկային ընկերական շէնքը:

Սիրելի ընթերցող, ցաւալի չէ այս իրողութիւնը, եւ գու ալ ինձ հետ չես ողբար ասոր վրայ, եւ չես վախաքիր որ Կորասիրութեան յառաջ բերած այս չարիքները վերնան եւ խափանին. ահ վախաքելի չէ միթէ որ ՊԱՌՋՈՒԹԻՒՆ կոչուած երկնային սովորութիւնը մտնէ մեր մէջը եւ ազատէ զմեզ այս չարագուշակչարիքէն, ազատէ երիտասարդութիւնը եւ իգական սեռը այն կենասպառ մոլութիւններէն որ միմիայն Կորասիրութեան հետեւանքն է թէ ըսեմք՝ չեմք սխալիր . . . քաղցրիկ Պարզութիւն, ո՞ր կարելի է քեզ գտնել արդեօք, մեր երիտասարդները եւ օրիորդները միթէ մինչեւ ցվերջ հակակրութիւն սիմի ունենան քեզի դէմ, քեզի՝ որ աղբիւր ես ամեն ընկերական եւ ընտանեկան երջանկութիւններու, քեզի՝ որ միայն կարող ես մեր թշուառութեանց մեծագոյն մասը վերցնել . . . աւանդ որ երիտասարդք եւ օրիորդք չեն դիտեր Պար-

զութեան յարդն ու օգուտը , աւազ որ Երիտասարդք եւ օրիորդք այսքան փորձերէ վերջը դեռ Նորասիրութեան մէջ կ'փնտռեն իւրեանց Երջանկութիւնը . այս ամեն Երիտասարդքթէ եւ շատ լաւ համոզուած են որ զարդարեալ աղջիկները տեսնուածին չափ գեղեցիկ չեն , սակայն դեռ նոցա վերայ կ'նային զմայլելով իբր Եթերական էակի մը վերայ . որ Երկնակամարի մը ամեն գոյներով զարդարեալ է . այս Երիտասարդքթէ եւ գիտեն որ փափկախօս աղջիկները կարծուածին չափ կրթեալ եւ համեստ չեն , սակայն դեռ նոցա հետ կուզեն անցնել իւրեանց օրերը՝ իբր անտառներ զմայլեցընող սոխակներու քով : Այս Երիտասարդքթէ եւ շատ աղէկ համոզուած են թէ օրիորդաց արտաքին նոր քաղաքավարական վարմունքները գրաւական չեն անոնց բուն վարմունքին , բայց եւ այնպէս դեռ խարուողներ շատ են անոնցմէ . նմանապէս ալ օրիորդք Երիտասարդաց ամեն արտաքին երեւոյթները թէ եւ գիտեն որ կեղծ են , սակայն դեռ հաճելի է իրենց նոր ածիլուած , շըտկուած եւ եղուտած մազերով , Նորութեան յարմար ամեն զարդարանքներով , բերաննին ճարպիկ խօսքերով եւ վարմունքնին արդի քաղաքավարական ձեւեր ունեցող Երիտասարդաց հետ յարաբերութիւն ստհելու :

Խեղճ Երիտասարդներ եւ օրիորդներ խնդրեմ վայրկեան մը կանկ առէք ուր որ էք , եւ միանգամ քննեցէք անցեալը եւ տեսէք թէ այդ ձեր բռնած ընթացքներնուդ վախճանը ի՞նչ է . տեսէք թէ արդեօք կայ ընտանիք մը որոյ երկու գլխաւոր անհատները ձեր արդի ընթացքներովը ամուսնացած եւ հիմա Երջանիկ լինին . . . ամենեւին չիկայ , մի՛պարապ տեղը ժամանակ վատնէք , ես ինքս ձեզի այս կէտերուս՝ նկատմամբ խօսելէս առաջ ամենքն աչքէ անցուցած եմ եւ բնաւ չեմ գտած այնապիսի ընտանիք մը որ Նորասիրութեան հետեւողք եւ միանգամայն Երջանիկ լինի . . . ընտանեկան եւ ընկերական Երջանկութեանց առաջին եւ գլխաւոր կործա-

նիշը եւ թշնամին եւ ամեն տեսակ թշուառութեանց նախնական շարժառիթը Նորասիրութիւնն է . մի տարակուսիք հաւատացէք իմ խօսքիս որ ձեր բարեկամն եմ եւ բարեացակամը , եւ հաւատացէք ինձ նաեւս թէ Պարզութեամբ միայն դուք կրնաք ձեր փնտռած երջանկութիւնը ձեռք անցնել , վասն զի պարզութիւնը այնպիսի յանգամանք մը ունի որ անդորրութիւն , խաղաղութիւն , սէր , երջանկութիւն կընծայէ ամեն անոնց որք իրեն կ'աշակերտին . Պարզութեամբ կամ Պարզասիրութեամբ միայն հնարաւոր է ազատիլ իսել մը անպիտոն եւ անկարեւոր ծախքերէ . Պարզասիրութեամբ միայն հնարաւոր է պահել բնական գեղեցկութիւնը , Պարզասիրութեամբ միայն կարելի է անկեղծութիւնը . եւ ասոնցմով հետեւաբար շատ հեշտ եւ դիւրին է այնպիսի երջանկութիւններ ձեռք անցընել որոնց համար կ'հալիք կ'մաշիք այժմ հեծելով եւ հառաչելով :

Երիտասարդք եւ օրիորդք Պարզասիրութեան հետեւեցէք շուտով տեսնելու այն երջանիկ օրերը որոնք քիչ մըն ալ թէ ուշանաք անհնար պիտի լինի ձեռք անցընել . Երիտասարդներ դուք որ առտուընէ մինչեւ երեկոյ արիւն քրտինք մտնելով , ուրիշներու ծառայելով , ասդիս անդին վազելով , մէկուն մէկալին աղաչելով , հեծելով , հառաչելով , ստելով , բարկանալով եւ այլն եւ այլն քիչ մը ստակ կը շահիք , մի այդքան ալ եւս հետեւիք Նորասիրութեան , գիտցէք քիչ մընալ ձեր աշխատութեան յարգն ու անձնական արժէքը . Խնդրեմ դուք որ շատ անգամ մեծամեծ վնասներ տեսած էք փայլուն օրիորդներէն , ալ դադարեցէք անոնց խարուելէն . հեռացէք , իմ սիրելի բարեկամներս , հեռացէք կաղաչեմ ամեն զարդարուն օրիորդներէն . մի մօտենաք , մի բարեկամութիւն ընէք , մի սիրէք եւ մի յարգէք այն օրիորդները որ ձեզ հետ փոխանակ պարզասիրութեան օրէնքներով շարժելնուն՝ փոխանակ պարզ ,

թեթեւ, աժան եւ մաքուր հանդերձանքներով տեսնք և լուն՝ ամենածանր, փառաւոր, շքեղ, սուզ եւ գոյն զգոյն կերպասներով եւ ուրիշ զանազան զարդարանք բով կ'տեսնուին, եւ փոխանակ պարզախօս եւ պարզարժ լինելուն՝ զանազան վարպետութեամբ եւ արդի սովոր-քաղաքավարական վարմունքով ձեզ իրենց սեպհականել կ'ջանան. Երիտասարդներ, խնդրեմ մի ըսէք «որքան շատ կը խօսիս եւ կ'կրկնես», վասն զի հաւատացէք ինձ որ սա ժամանակիս մէջ եթէ կայ մէջ կը որ ձեր կացութեան վրայ ուղիղ տեսութիւն եւ կարեկցութիւն ունի, ան ալ ես եմ. Ես՝ որ ուխտ ըրածեմ մինչեւ մեռնիլու ձեր բարեացն համար ամեն ձեռքէս եկածն ընելու, ձեր վտանգները ձեզի յայտնելու եւ թէ որ կարելի է ձեզ այնպիսի ընթացքի մը եւ կացութեան մը առաջնորդելու ուր միայն հնարաւոր է ձեզ երջանիկ լինիլ:

Եւ դուք օրիորդներ, ալ դադրեցէք յարգ ընծայելէն Նորասիրութեան հետեւող երիտասարդաց. Թող անցեալ սերունդը զձեզ համոզէ թէ Նորասիրութեան աշակերտ երիտասարդ մը (ինչպէս օրիորդ մի ալ) չկրնար բարի ամուսին լինել, չկրնար զձեզ սիրել եւ հաւատարիմ մնալ. Չկրնար . . . Ենչնար է որ Պարզասիրութեան օտար երիտասարդ մը (ինչպէս նաեւս օրիորդ մը) կարենայ գիտնալթէ սէրն ինչ է. սէրը կ'փախչի ՆՈՐԱՍԻՐՈՒԹԵՆԻՆ. սէրը որ միմիայն պարզասիրութեան հետ կրնայ մնալ անբաժանելի կերպով, ուստի դուք եւս կը խնդրեմ իրենց անձնական յարգն ու աշխատութիւններն ուն արժէքը չճանաչողներէն յոյսերնիդ կտրեցէք, յամարումնիդ պակսեցուցէք, հեռացէք անոնցմէ զզուելով. վասն զի ի՞նչպէս կարելի է որ իւր աշխատութեան յարդըն ու անձնական արժէքն չգիտցող երիտասարդ մը գիտնայ ձեր յարգն ու արժէքն, միթէ հնարաւոր բան է որ նոքա իրենց անձէն ուելի ձեզ սիրեն եւ յարգեն . . . յիմարութիւն չէ մի այսպէս յոյս մը ունենալ:

Այս երիտասարդ եւ օրիորդ որ այս տետրակո  
կը կարդայ , թող խորհի մի անգամ թէ որն է նշան եւ  
ապացոյց մտաց կատարելութեան եւ վեհանձնութեան ,  
Նորասիրութիւնը թէ Պարզասիրութիւնը , (թէ որ հր-  
նար լինէր այս երկու բառերը իրարու մօտ չպիտի գրէի) ,  
տեսէք մի անգամ լեռնականները եւ վայրենի մարդիկ :  
Ները որքան սէր ունին կարմիր եւ նման գոյներուն վը-  
րայ , եւ մեք զանոնք շատ անգամ կոշտ (խմալը) չե՞նք  
անուանէր , եւ ինչո՞ւ . վասն զի , շատ աղեկ կը տես-  
նենք թէ նոքա ճշմարիտ վեհանձնութիւն եւ մտաց կա-  
տարելութիւն չունենալնուն համար է՝ որ փայլուն դոյ-  
ներու սիրահար են . ուստի եւ մեր այս ընթացքը չի  
հաստատէր թէ Նորասիրութիւնը կոշտութիւն է , թէ նա  
վեհանձնութեան եւ մտաց կատարելութեանը սլակասու-  
թեան արգասիքն է , ապա ուրեմն ինչո՞ւ մենք դեռ սի-  
րահար եմք փայլունութեան , հաստատելո՞ւ համար թէ  
մենք եւս կոշտ եմք . . . կ'խնդաս գուցէ իմայս ըսած-  
ներուս վրայ , ընթերցող (թէ որ նորասէր երիտասարդ  
մը կամ օրիորդ մի ես) անանկ չէ , հոգ չէ խնդա՛ , բայց  
հաստատ գիտցիր որ իմ ըսածներուս անհերքելի ճըշ-  
մարտութիւններ լինելը փորձը քեզի պիտի յայտնէ-  
րայց գուցէ ան ատենը երբ քեզի համար ալ երջան-  
կութիւն եւ խաղաղութիւն շիկայ :

Երիտասարդներ եւ օրիորդներ , մտաց կատարելու-  
թիւն ստացէք եւ վեհանձնութիւն , եւ ձեր երջանկու-  
թիւնը սլարզասիրութեան մէջ փնտուեցէք , սլարզասի-  
րութեան մէջ կըսեմ որ կենաց ամեն դառն հոգերը կը-  
բառնայ մարդուս որտին մէջէն եւ աղնուութիւն կու-  
տայ նորա . տեսէք ինչպէս պարզասէր են եւ էին՝ այն  
ամեն աշխարհօդուտ երեւելի մարդիկները , որ ժամանակ  
ժամանակ երեւցան եւ կերեւնան աշխարհիս վերայ .  
կը հաւատաք ինձ թէ որ ձեզի իմացնեմ թէ հոչակա-  
ւորն կարիպալտիին ամբողջ ձեռք մը հագուստը քսան  
եւ վեց ֆրանքի արժողութիւն ունի . կհաւատաք թէ որ

ձեզի ըսեմ թէ Եւրոպայի թագուհիները եւ թագաւորները եւ մեծամեծ մարդիկ չափազանց պարզասէր են, որեմն իմ սիրելի ընթերցողներս եկէք Պարզասէր եղիք պարզ հագուեցէք, պարզ խօսեցէք, եւ սարզ վարմունք ունեցէք, որոնցմով աւելնայ ձեր յարգն ու արժէքը. այս պատճառվ տեղի ունեցած մեծամեծ չարեաց եւ ապերջանկութեանց առջեւն առնուի, եւ մարդկային ընկերութեան ձեր այս ընթացքին պատճառաւ կրած զրկանքները վերնան :

Թէ եւ չէի ուզեր այս գլուխո աւելի երկարել, սակայն եւ հարկ է ինձ հոս յիշել թէ Պարզասիրութեան պակասութիւնը եւ Նորասիրութեան տիրապետութիւնը է գլխաւոր պատճառ երիտասարդաց չամուսնաւուն, եւ մեծ իրաւամբ, վասն զի ինչպէս հնարաւոր է է որ ամեն տանջանքներով քիչ մը ստակ շահող երիտասարդները համարձակին այնպիսի օրիորդի մը հետ ամուսնանալու, որ Նորասիրութեան վարժուած է : Այս օրիորդք եւ օրիորդաց ծնողքները ամենեւին պատճառ չունին երիտասարդաց զէմ տրտունչ ընելու եւ իրենց աղջկանց տունը մնալուն համար դժգոհալու եւ մանաւանդ զարմանալու, երբ երիտասարդք ստակի գումար մը կը խնդրեն իրենց աղջիկները առնելու համար, վասն զի շատ դիւրին է խորհիլ թէ երիտասարդները բաւական խելք ունին մտածելու թէ՝ եթէ իրենք ամուսնան այնպիսի աղջկանց հետ որսնք Նորասիրութեան հետեւողք են, հարկաւ շատ նեղութիւններու ենթակայ պիտի լինին զանոնք դոհ ընելու մասին, խել այս տեսակ ամուսնութեանց հետեւանքը բացատրելու հարկաւորութիւն չունինք քանի որ աչքերնուս առջեւը այնքան օրինակներ ունինք, որ անհնար է չետեսնելը :

Ուստի եթէ օրիորդները կը փափաքին որ տունը չի մնան թող այսօրուընէ անմիջապէս Պարզասիրութեան օրէնքը ընդունին եւ ի գործ դնեն, ծնողք եւս եթէ կու-

զենիրենց աղջիկները ամսւոնացնել թողիրենց առաջին  
դաստիարակութիւնը լինի իրենց աղջկանց Պարզամիրու-  
թիւն ուսուցանելեւ անոր վարժեցնել . . . որքան գեղեցիկ  
է այն օրիորդը որ աժան , թեթեւ , մաքուր եւ սլարդ  
հանդերձներով զարդարուած է . պատկերաց մէջ հրեշ-  
տակները լոկ ճերմակներ հագած կը նկարուին որ իմ  
ըսածս կը հաստատեն . մտաց կատարելութիւն , վե-  
հանձնութիւն եւ ճաշակ ունեցող երիտասարդ մը կամ  
որ եւ իցէ մարդ՝ զմայլելով կնայի այն օրիորդին , որ  
Պարզամիրական օրէնքներուն համածայն զարդարուած  
է . իսկ հեղնութեամբ եւ արհամարհանօք կնայի այն  
օրիորդին վրայ որ Նորասիրական օրէնքներուն համա-  
ծայն ամենայն փառաւորութեամբ զարդարուած եւ  
ուռած է . հպարտ , ինքնահաւան եւ ծաղրելի սիրամարդի  
մը նման . . . ես չեմ քաշուիր նաեւս ըսելու թէ ընդ-  
հանրապէս աւելի տգեղ եւ անկիրթ օրիորդներն են որ  
Նորասիրութեան կ'հետեւին . ինչպէս նաեւս անառակ եւ  
վատահամբաւ կիները՝ որ սղծութեամբ վաստկած բո-  
լոր ստակնին միշտ փառաւոր հանդերձանքներու հա-  
մար կ'մսխեն , եւ թէ որ չեմ սխալիր ամենէն փառաւոր  
հանդերձանքներ հագնողները , ամենէն լեզուանինե-  
րը եւ ամենէն աւելի արդի սովոր-քաղաքավարա-  
կան վարմունքները նոքա ունին . իսկ գեղեցիկ եւ  
համեստ օրիորդները բնականաբար անտարբեր կլինին  
Նորասիրութեան , եւ շատ հետամուտ են Պարզամիրու-  
թեան : Մեր վերոյգրեալ բոլոր խորհրդածութիւններէն  
ալ պարզ է տեսնել թէ ինչ ընթացք ունին երիտասարդ-  
ները եւ օրիորդները եւ միանդամայն դժուար չէ տես-  
նել թէ նոցա այս բռնած ընթացքը բաւական է միայն  
երիտասարդները գիճութեան եւ անառակ կանաց ձեռ-  
քը մատնելու , քանի որ , թէ որ վոխանակ Նորասիրու-  
թեան (որոյ մէջ կ'բովանդակին բոլոր անկարեւոր ծախ-  
քերը) Պարզամիրութիւնը (որոյ մէջ կ'բովանդակին ա-  
մեն սանտեսական եւ օրինաւոր խնայողութիւնները) ըն-

գունուած լինէր եւ երիտասարդք եւ օրիորդք այս եռաքինիս վարժուած լինէին . կրնամը ըսել թէ հիմա երիտասարդաց եւ օրիորդաց ինը տասներրորդը՝ արդէն զաւակաց տէր երջանիկ ծնողքներ պիտի լինէին յօդուտ մարդկային ընկերութեան եւ Հոյ աղդին եւ անտարակուսելի է թէ՝ եթէ Նորասիլութիւն չի լինէր անառակ կանանց մեծագոյն մաօք պիտի փրկուէր :

Ի՞նչ զարմանալի էակ է մարդս , որ թէ եւ այս աշխարհիս մէջ արարածոց գերագոյնն է , թէ եւ կատարեալ աղատ է եւ թէ եւ երկնից իրեն շնորհած դատութեան շնորհիւը կարող է՝ չարը բարիէն եւ օրինաւորը ազօրինաւորէն որոշելու , ուսկայն չեմ գիտեր ինչ մեծ , անտեսանելի եւ անմերկնելի աղդեցութեամբ կամ մղմամբ մը այնպիսի ընթացք մը ընտրած եւ բռնած է , որ մի միայն իւր ասլերջանկութեանը պատճառ կ'լինի . բոլոր մարդիկ երջանկութիւն կ'փնտռեն . երջանկութիւնը իրենց ձեռքն է (երջանկութիւնը բաւականասիրութեան մէջ է) բայց չեմ գիտեր ինչու համար նոքա իւրեանց փնտասածք ձեռք անցնելու եւ վայելելու համար հարկ եղած միջոցը գործածելուն տեղը , ճիշդ , իւր փընտասածք ձեռքէն հանելու եւ բոլորովին կորսնցնելու ճամբան բռնած է շարունակ ողբալով թէ՝ <sup>ա</sup> այս աշխարհիս մէջ երջանկութիւն չիկայ » :

“Այս աշխարհիս մէջ երջանկութիւն չիկայ » ”

Անմորդավայելյիմարաբանութիւն . յիրաւի որ ոչ տիեզերաց Արարչին պատիւ կ'բերէ եւ ոչ մարդկութեան : Նախախնամութեան պատիւ չի բերեր , վասն դի այս խօսքով ուրիշ բան չի հասկուիր , եթէ ոչ իւմացնել թէ Աստուած տանջանարանները ստեղծած է մարդս տանջելու համար , մարդս՝ որ ասկից առաջ բան մը ըրած չունի Աստուծոյ դէմ , մարդս՝ որ այնքան նըուաստ է Աստուծոյ քով , որ հազիւ Աստուծոյ վեհանձնութեանը կիցնայ տռանց բըտութոյն պատճառի մը զայն այնպիսի աշխարհի մը մէջ ստեղծէ որ մինչեւ վերջը

տանջուի առանց ամենեւին Երջանկութեան համես առ  
 նելու, եւ մանաւանդ՝ ասկից սա ալ կ' հետեւի թէքա-  
 նի որ մարդս դեռ Աստուծոյ դէմ բան մը ըրած թըշ-  
 ւառութեան մատնուած է, ըսելէ որ իւր հանդերձեալ  
 վիճակները լաւագոյն չեն կրնար լինիլ . . . բայց չէ, այս-  
 պէս չէ իրողութիւնը . աշխարհս Երջանկութեան աշ-  
 խարհ է, բայց մարդս որ ազատ արարած է մի է, բնու-  
 թեան օրէնքներուն յարմար չդալելով՝ կ' պատժուի, եւ  
 որովհետեւ նա չդիտեր թէ ինքն բնութեան դէմ զի-  
 նելուն համար ապերջանիկ կ' լինի, անոր համար միշտ  
 « Երջանկութիւն չկայ կ' դոչէ » բայց յուսալի է որ Երբ  
 մարդկային ամբողջ սեռը ուսանի բնութեան ամեն օ-  
 րէնքները եւ իւր անձին բնութեան հետ ունեցած յա-  
 րարերութիւնները՝ ան ատենը՝ բոլոր տիեզերքի մէջ եր-  
 ջանկութիւն կայ « պիտի աղաղակէ », եւ ան ատենը պի-  
 տի ճանչնայ այն հզօր եւ մարդասէր կակը որ իւր ա-  
 րարածներուն համար՝ բնու տանջանարաններ ստեղծած  
 եւ ամենեւին պատճառ չունի ստեղծելու : Տեսանք  
 դիմուս մէջ Նորասիրութեան տիսուր հետեւանք-  
 ները, ուրեմն արժան եւ օրինաւոր չէ որ մենք 'ի սէր  
 մարդասիրութեան ասկից յետոյ ամեն ջանքերնիս 'ի  
 գործ դնեմք զանի մեր մէջէն հալածելու եւ պարզա-  
 սիրութիւնը ամեն տեղ քարոզելու եւ տարածելու . մի  
 թէ աններելի յանցանք եւ յիմարութիւն ըրած չպիտի  
 լինիմք թէ որ Նորասիրութեան այսքան վսասներուն եւ  
 Պարզասիրութեան այնչափ օդուտներուն տեղեակ եւ  
 համոզուած լինելնուս յետոյ՝ դեռ անտարբերութեամբ  
 կանդնիմք եւ այս մասին մեզի ինկած սլարտաւորու-  
 թիւնը չկատարեմք . ուստի ամենաանկեղծ թախան-  
 ձանքով կ' խնդրեմ այս տետրակս կարդացողներէն որ  
 Պարզասիրութեան սկզբունքը եւ անոր օդտակարու-  
 թիւնը ամեն տեղ քարոզեն եւ ջանան որ Նորասիրու-  
 թիւնը հալածուի եւ նախատուի ամեն տեղ եւ ամե-  
 նէն . . ճշմարիտ մարդս ան է որ մարդկային ընկե-

րութեան օդ տակար եղած մէկ սկզբունք մը քարտ-  
զելու չդանդաղիր :

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՅ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

" Երիտասարդութեան արդի վճակը  
Մահ կ'սպառնայ մարդկային շնչքին : ,

Տետրակիս առաջին գլխոյն մէջ Նորասիրութեան  
պատճառաւ Երիտասարդաց եւ օրիորդաց ամուսնանա-  
լու անկարող լինելնին յայտնելնուս յետոյ՝ բնականաբար  
կալարտաւորիմք նոցա արդի կացութիւնը նկարագրել եւ  
յայտնել թէ ամուսնութիւնը որքան կարեւոր է , իսկա-  
մուսնանալէ հեռի մնալը որքան վտանգաւոր . . . այս  
կէտս լաւ մը բացատրելու համար նախ պարտաւոր ենք ,  
Երիտասարդաց եւ Օրիորդաց արդի ցաւալի կացութիւ-  
նը նկարագրել :

Այն օրը Երբ մենք Հայ Երիտասարդութեան ներ-  
քին կացութիւնը քննելու ելանք՝ նորա աղետալի ախ-  
տաւորութիւնը տեսնելով՝ զարհուրանքով մը ափերնիս  
ճակատնուս զարկինք եւ շուարեցանք , ըստ որում ինչ  
որ չէինք փափագէր տեսնել՝ զայն գտանք նորա վերայ ,  
իրաւ որքան որ քիչ մը յոյս ունէինք թէ գուցէ մեր  
կասկածները եւ երկիւղները երեւակայական են , սա-  
կայն փորձը եւ քննութիւնը Երբ մեր գտնել շուզածը  
առջեւնիս հանելով սրտերնիս դառնասլէս վշտացուց ,  
արդարեւ չէ թէ միայն ասլշիլ եւ շուարիլ՝ այլ քարա-  
նալ անգամ՝ օրինաւոր էր մեզ . ինչւ որ մեր ըրած գըն-  
քննութիւններէն եւ հետազօտութիւններէն ուա գտանք  
թէ Հայ Երիտասարդութիւնը բոլորովին տղիտութեամբ

Պատկեր Բ.





ինքղինքը այնպիսի մոլութեանց տուած էր, որոնց  
քստմնելի արդասիքները աննկարագրելի են լիովին,  
վասն զի չէ թէ միայն իմ տկար գրիչս, այլ աշխարհիս  
հին եւ նոր իմաստասիրաց պերճաբանական կարողու-  
թիւնները թէ ունենամ տակաւին անհնար է որ կարե-  
նամ լիովին նկարագրել գիճութեան եւ հեշտական շը-  
ռայլութեանց արդասիքները. ուստի հոս թող ներելի  
լինի ինձ ըսելթէ մարդս յիշեալ մոլութիւններով չէ  
թէ միայն իւր կեանքին կեսէն աւելին կ'կորսնցնէ, այլ  
մնացեալ կեանքն ալ այնքան տաժանելի կլինի որ մարդ  
չկրնար երախտագէտ որտով շնորհակալինիլ վերին  
Տեսչութենէն իրեն կեանք շնորհած լինելուն համար:

Պէտք է պիտնան ամեն Հայ պատանիք, Երիտա-  
սարդք եւ ՉւՓԱՀԱՍՔ թէ մարդկային շէնքին առա-  
ջին եւ ամենէն գլխաւոր կործանիչը Գիճութիւնն  
է. Գիճութիւնը՝ որ զանազան ճամբայներով մար-  
դը դեռ պատանի չեղած վրան յարձակելու կաշ-  
խատի, Գիճութիւնը՝ որ իւր ձեռքն անցուցած որսը  
մինչեւ գերեզմանքարշել կիտափաքի, Գիճութիւնը՝ որ  
մարդկային կենդանականութեան ամենէն հարկաւոր եւ  
նախնական առողջարար տարերքը ծծելով մարդս կը-  
մախք կդարձնէ, եւ յետոյ մէկ հարուածով մահուան  
գիրկը կնետէ զայն, զայն՝ որ հազիւթէ իմացաւ կեանք  
ունենալը.

Ա՛ն, Գիճութեան աշակերտները եւ սիրահարները  
ուր էր թէ մի անդամ խորհէին թէ ինչ կ'ընեն. ուր  
էր թէ նոքա համոզուէին թէ իրենք իրենց ձեռքերով  
ինքղինքնին զրկելու վրայ են այնպիսի երջանկութիւն-  
ներէ եւ բարօրութիւններէ՝ առանց որոնց կեանքս Սա-  
հարայի անապատին եւ կամ սառուցեալ բեւեռներուն  
սկիտի նմանի. ուր էր թէ պատանիք, Երիտասարդք եւ  
ՉւՓԱՀԱՍՔ ուսանէին թէ իրենք վարդենիի մը կնմա-  
նին, կարօտ այն տերեւներուն որ շուք կընեն իւր վերայ  
արեգակին կիզիչ ճառագայթներէն զինքը պահպանե-

լու համար, եւ ասոր հետ ՚ի միասին ուսանէինթէ գի-  
ծութեամբ իրենք անձամբ իրենց ձեռուըներովիսին փըր-  
ցունելու եւ նետելու վրայ են զիրենք պաշտպանող տե-  
րեւները, որ վերջը արեգակին ամենէն տկար մէկ ճա-  
ռագայթովը շորնան ու մեռնին. ուր էր թէ ամեն  
մարդ գիտնար թէ ոգելից ըմպելիքներու դործածութիւ-  
նը, որկրամոլութիւնը, մարմինը անմաքուր սլահելը, գէշ  
օդ ծծելը եւ գէշ ջուր խմելը շատ անգամ մարդկային  
կենաց հարիւրին քսան տարիները կ'կտրեն, իսկ գի-  
ծութիւնը հարիւրին քառասուն, յիսուն եւ շատ անգամ  
ութսուն տարիները կ'կտրէ միշտ: Այս կարելի է որ  
մարդ մը առողջապահական ամեն օրէնքներուն դէմ  
դործէ եւ ութսուն կամ հարիւր տարիներ կեանք ու-  
նենայ, սակայն կենաց ամենէն կարեւոր տարերքը մըս-  
խողը՝ այսինքն գիճութեան հետեւողը, անհնար է որ  
յիսուն տարիներ ապրի եւ ասոնց համար յիսուն տա-  
րիներ կեանք ունենալն անգամ կամ հրաշք է եւ կամ  
բնութեան ամենամեծ մէկ չնորհքը:

Հեշտական շոայլութեան դալով՝ հազիւթէ կըրնամ  
րաւական խօսք գտնել համոզելու իմ ընթերցողներս  
այս մոլութիւններէն յառաջ դալիք չարիքներուն դառ-  
նութեանը, ըստ որում հեշտական շոայլութեամբ ալ  
մարդկային կենդանական տարերքը կ'փճանայ եւ նմա-  
նասլէս նաև որ այս մոլութեան մէջ կ'գտնուի:

Հոգ չէ թէ մարդ մը ազատ լինի կամ ամուսնաց-  
եալ, իւր առաջին խորհելիքը այս մոլութեան գերի չի  
լինելն է. ազատ մարդ մը իրաւ է որ այս մոլութեամբ  
միայն ինքզինքը կ'սպաննէ, սակայն ամուսնացեալք ի-  
րենց հետ ՚ի միասին կիներնին եւ շատ անգամ ալ զա-  
ւակնին կ'սպաննեն. ինքզինքնին կ'սպաննեն՝ ստէպ մեր-  
ձաւորութեամբ. կիներնին կ'սպաննեն՝ նոցա ուղած կամ  
չուղած ժամանակը զանոնք նեղելով եւ եղծելով այն  
դործարանները, որոնց առողջութիւնը իդական կազմու-  
թեան համար ամեն բանէ առաջ կարեւոր է. եւ որոնց

ստէալ մերձաւորութեամբ ենթակայ եղած վատառով ջութիւննին ուղղակի կ'վրդովէ ամրողի իգական դըրութիւնը . զաւակնին կ'սպաննեն շատ անգամ՝ իրենց յղի կինը չափէն եւ կարեւոր եղածէն աւելի տանջելով :

Ինչպէս որ գիճութիւնը՝ նոյնպէս՝ ալ հեշտական շրայլութիւնը իւր անթիւ վտանգաւոր հետեւանքները ունի , եւ ամուսնացեալ մարդոց մեծագոյն մասը այս մոլութեան պատճառաւ կ'մեռնին , ինչու որ ինչպէս ուրիշ անգամ ալ ըսած եմք , այս մոլութեամբ մարդու ջիղերը այնքան կ'տկարանան՝ որ ալ չեն կարենար բանի մը դիմանալ եւ հետեւաբար երբ այս մոլութեան ենթակայ եղող մարդ մը դիպուածով մը թէ պաղի՝ ջիղերուն իրեն չօժանդակելովը ստամոքսի , ուղեղի եւ կամ աղիքներու հիւանդութիւն մը կ'ստանայ եւ կ'մեռնի :

Ամեն տեսակ հիւանդութեանց միայն երկրորդական պատճառներն են որ կյիշուին առհասարակ , բայց պէտք է գիտնալ թէ գիճութեան եւ հեշտական շրայլութեան մոլի չեղող մը պաղի ալ կրնայ դիմանալ տաքի ալ , քանի որ յիշեալ մոլութեանց սիրահար մը կամնոյն մոլութեանց գերի եղող ծնողաց զաւակ մը՝ փոքրիկ պատճառաւ մը շատ ենթակայ է հիւանդ լինելու եւ մեռնելու . բժշկական բոլոր ջանքերը՝ ի դերեւ հանող հիւանդները ասոնք են միշտ . . . խեղճ բժիշկները իրենց ամեն ջանքն ու վարպետութիւնը՝ ի գործ կ'դնեն ունայն տեղը , վասն զի ինչպէս հնարաւոր է որ կես մեռած մարդ մը հիւանդանայ եւ առողջանալու յարմար լինի . . . թէ որ հնարաւոր է փոքրիկ մակոյկի մը մէջ գտնուած երկու նաւաստիով ահագին պատերազմական նաւ մը հոսանքի դէմ տանիլ , հնարաւոր է եւս գիճութեան եւ հեշտական շրայլութեան մոլի եղող մը հիւանդանալէն վերջը բժշկական դեղերով բժշկուիլ :

Որքան որ մենք “ ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԾ անուն աշխատասիրութիւննովնիս նկարագրեցինք հայ ”

պատանեկութեան եւ երիտասարդութեան՝ գիճութեան եւ հեշտական չույլութեան պատճառաւ ենթակայ եղած խղճալի կացութիւնը, սակայն հիմա շատ աւելի տեղեակ եղանք նոցա վերայ, ըստ որում ասկից առաջ մեր ունեցած տեսութիւննիս հազարասլատիկ աւելցաւ եւ որտերնուս նոցա վերայ զգացած կարեկցութիւնը անթուելի կերպով բազմապատկուեցաւ, անանկ որ այս վարկենիս մէջ մեր ամենէն նախնական եւ անհրաժեշտ պարտաւորութիւնը կ'սեպենք ամեն հոգ եւ մտածմունք թողուլ եւ փութալ արդէն գերեզմանաց մէջ թաւալեալ երիտասարդութեան օդնութեան հանելու :

Վերոյիշեալ աշխատութիւնս հրատարակած միջոցիս՝ որքան որ կը կարծէի թէ երիտասարդութիւնը գիճութեան եւ հեշտական չույլութեանց պատճառաւ կենապառ տռփական եւ ջղային հիւանդութեանց տէր եղած է, սակայն ամենեւին չէի կրնար երեւակայելթէ արդէն նորա արմատը չորնալ սկսած է եւ տռփական հիւանդութիւնք զանի նուաճած եւ կործանած են. ես կը կարծէի թէ յիշեալ մոլութիւնները եւ հիւանդութիւնները դեռ քիչերը գերած են, բայց չէի կրնար հաւատալ թէ երիտասարդութեան, պատանեկութեան եւ չափահասութեան հարիւրին իննսունեւինը իրենց ժանտակուտ ճիրաններուն որս ըրած են. բայց երբ ասոնցմէ հարիւրաւորներ շնորհակալութիւննին բերաննին ինձ հետ տեսնուեցան՝ սոսկացի եւ ալ անտարակոյս եղայ նոցա աներեւակայելի վտանգաւոր կացութեան մէջ գտնուելնուն, եւ միանդամայն զգացի թէ եթէ բարերար ձեռք մը զանոնք ազատելու շփութայ, արեւակեզ վարդենւոյ մը նման պիտի ընկճին նոքա մահուան դառն եւ դժոխըմբեր հարուածներուն ներքեւ :

Ա՛ն, կարծես թէ բաւական չէր իմ թափած արտասուքս հազարաւոր պատանեաց եւ երիտասարդաց լոիկ չիրիմներուն վրայ. կարծես նոցա գիճութեան եւ հեշ-

տական շռայլութեան պատճառաւ տարածամ մահուան  
մանդաղին ենթակայ լինելնուն համար սրտիս կրած կոկի-  
ծըն ու ցաւը հերիք չէր, ահաւասիկ դողդղացող երիտա-  
սարդութիւնը ժանտախտահար ինձ կ'մօտենայ, եւ իւր  
արտաքին խարէական կերպարանքը մէկդի նետելով՝  
իւր չոր, թունաւորուած եւ փտտած կմախքը ինձ կ'ներ-  
կայացնէ աղիողորմ հայեցուածքով, օղնութիւն կխնդրէ  
ինձմէ նա իւր հեշտական թշնամիներէն ազատելու,  
ըրած կորուստին տեղը լեցնելու, իւր բնական կենդա-  
նութիւնը ձեռք բերելու եւ այս քաղցր կեանքէս իւր  
իրաւացի բայց կորսնցուցած բաժինը ստանալու :

Արդարեւ նա որ շմտածեր երիտասարդութեան վը-  
րայ, եւ կարեկցութեան չ'շարժիր արարածոց ամենէն  
ընտիր մասին այս սրտատոչոր կացութիւնը տեսնալով՝  
ամբարիշտ մը եւ տարտարոսական ճիւաղ մի է :

Թող լսեն բոլոր ազգայինք թէ Հայ երիտասարդու-  
թիւնը խիստ եղկելի կացութեան մը մէջ կ'գտնուի այ-  
սօր, եւ շատ երիտասարդներ որ այսօր ուրախ եւ զր-  
ւարթ կերեւան՝ վաղն ծուած գլխով գերեզմանաց մէջ  
պիտի մտնեն իրենց նախորդներուն նման, Այո՛, մեր  
ազգին այս թանկագին մասը որ այսօր նորատունկ ծառի  
մը նման մեծամեծ յոյսեր կուտան՝ վաղն յանկարծ  
շանթահար ծառի մը նման պիտի յերկիր տապալին այ-  
րած եւ մոխիր դարձած :

Վերջապէս ԱՆՀՆՐ. է որ կարողանամ կատարելա-  
պէս նկարագրել երիտասարդաց երկիւղալից կացութիւ-  
նը, անկարելի է որ բացատրեմ թէ զիմութիւնը եւ հեշ-  
տական շռայլութիւնը ինչպէս ուժգնութեամբ եւ երա-  
գութեամբ չափահասներէն սկսեալ մինչեւ պատան-  
եաց երակներուն մէջ տարածած են իրենց մահահու-  
թոյնը. ուստի թող ներելի լինի ինձ այս մասին մէջ ու-  
նեցած անկարողութիւնո, եւ ընթերցողք թող մէկ խօս-  
քէս հազար հասկնալով հարկ եղած կարեկցութիւնը ու-  
նենան նորաբոյս սերունդին վրայ :

Բաւական սեպելով երիտասարդութեան արդի կացութիւնը նկարագրելնիս, քիչ մըն ալ աչուընիս այն սեռին վրայ դարձընեմք որոյ եթէ « բնութեան գերազնիւ ծաղիկ » անունը տամք՝ չեմք սխալիր, եւ որն որ արական սեռէն կ'տարբերի իւր կազմական եւ դիմական գեղեցկութեամբը, փափկութեամբը եւ մանրութեամբը. եղուկ որ մարդկային օրէնքներուն անբաւականութեան եւ ընկերական պարտաւորութեանց պակասութեանց պատճառաւ մեր երջանկութեան գլխաւոր շարժառիթ եղողայս սեռը այժմ այնպիսի կացութիւն մը ստացած է որ՝ որքան որ անարժէք կընէ զինքը՝ նոյնքան մեծ անպատւութիւն կ'ըերէ մեր վրայ որ ինքզինքնիս անոնց իշխան կարգած եմք . . . այս եթէ մեք իշխան եմք եւ կանայք հպատակ, արդարեւ նոցա արդի կացութիւնը տիեզերքին առջեւ զմեզ խայտառակելու չափ կարողութիւն ունի . . . բայց թողունք այս կէտիս վրայ քիչ մը ետքը խօսելու, դառնամք այժմ ստորագրել այն դժունդակ վիճակը որոյ նշաւակ եղած է իգական սեռ :

Նորասիրութեան եւ շատ մը ուրիշ պատճառներով (որոնց վրայ սիտի խօսիմք այս աշխատասիրութիւններնուս մէջ) երիտասարդութիւնը խորշելով ամուսնական կեանքէն եւ ինքզինքը տալով անբնական եւ կենասպառ մոլութիւններու, սկսաւ կամաց կամաց ապօրինաւոր աչքով նայիլ գեղեցիկ սեռին վրայ, եւ մոռնալով բոլորովին յիշեալ սեռին ազնուութիւնը՝ սկսաւ զանի միայն իւր հաճութեանը, հեշտական երջանկութեանը համար գործածել. արական սեռին այս ընթացքը յայտնի է թէ ի՞նչ արգասաւորութիւն կունենայ, իգական սեռը տեսնելով թէ ինքը ալ կորանցուց իւր արժէքը եւ տեսնելով որ արական սեռը աւելի գեղեցիկին եւ փառաւորին վրայ համակրութիւն կ'զգայ. սկսաւ մոռնալ նա ալ իւր տնտեսական պարտաւորութիւնները եւ աշխատիւ որ թէ արհեստական եւ թէ ուրիշ որ եւ իցէ միջոցներով աւելի գեղեցիկ երեւայ արական սեռին

աչքերնուն, եւ վերջապէս ամեն քաղաքականացեալ օրիորդք այս սովորութեան մէջ այնքան մոլի եղան որ այսօր գրեթէ մեծ մրցում կայ նոցա մէջ թէ արգեօք որն արհեստի միջոցաւ կրնայ ամենէն գեղեցիկ եւ հը- րապուրիչ երեւնալ:

Առդ յայտնի է ամենուն թէ՝ օրիորդաց այսքան նուաստ ընթացք մը ունենալէն ի՞նչ չարիքներ կրնայ արգասաւորիլ. արհեստական այն ամեն միջոցները ո- րոնց գերի եղած են այսօր գրեթէ ամեն օրիորդք մեծամեծ եւ կենասալաւարգասիքներ յառաջ բերելու վրայ են ամեն օր, որոնց տիսուր պատմութիւնները քիչ անգամ չեմք լսեր. քանի քանի աղջիկներ սնգոյրի վտանգաւոր սովորութեամբ չէ թէ միայն բնական գե- ղեցկութիւննին կորուսած են, այլ անոր թունաւոր բը- նութենէն կեանքերնին փճացուցած են. ըստ որում պէտք է գիտնալ թէ որ եւ իցէ նիւթ մը որ կը ծած- կէ մեր մարմիններուն մէկ կողմը եւ կ'արգիլէ նոյն տեղին արտաշնչութիւնը, շատ վնաս կ'հասցնէ մարմին- նուս նոյն մասին. իսկ սնգոյրի նման պիղծ եւ թու- նաւոր շաղախ մը մեր երեսին վրայ տարածելով՝ տա- րակոյս շկայ որ դէմքերնուս փափկութիւնը եղծուե- լէն 'ի զատ՝ անշուշտ պիտի թունաւորիմք ալ. նմանա- պէս արդեօք քանի դեռահաս օրիորդներ նեղ հանդեր- ձանքներու պատճառաւ գերեզման մտած են: ո՞վ կը ր- նայ չհամոզուիլ նեղ կոշիկներուն վնասակարութեանը եւ ո՞վ չ'սոսկար երբ խմանայ ֆօրսէի ըրած կոտորած- ները. պէտք է գիտնալ թէ ֆօրսէ կոչուած տանջան- քի գործիքը աղջկան մը փափուկ մէջքը այնքան կը սեղմէ՝ որ անոր բնական ծեւը կ'անհետացնէ, եւ հետե- ւաբար թէ ստամոքսին, թէ արգանդին, թէ փալոր- եան տաշտերուն եւ ծուարարքներուն նեղութիւն տա- լով անոնց բնական գործողութեանը արգելք կ'լինի եւ շատ անգամ յանկարծական մահ կ'պատճառէ. կին մը բնականաբար այնպիսի գեղեցիկ եւ համեմատական

Հնք մը ունի որ անկարելի է առանց զմայլելու նորա վրայ նայելը<sup>\*</sup>։ իսկ անոր հակառակ նեղ հանդերձներով եւ սնգոյրով ինքզինքնին գեղեցիկ ցըցնելու աշխատող կիները կամ աղջիկները այնքան կ'կորսնցնեն իրենց բնական ձեւն որ մարդ սոսկալով կ'պարտաւորի նորա վերայ նայիլ, վասն զի այսպիսի արարած մը երեւակայական ճիւաղէ մըն ալ սոսկալի է<sup>\*\*</sup>։

Հիմա մեր ըսածներէն յայտնի կ'տեսնուի թէ իգական սեռը, արական սեռին սէրն ու համակրութիւնը վաստըկելու համար այնպիսի միջոցներու դիմած է որ յիշեալ սեռն ալ երիտասարդաց չափ վտանգաւոր կացութեան մը մէջ կ'գտնուի առողջութեան կողմանէ, եւ ինչպէս որ երիտասարդք գիճութեան եւ հեշտական շոայլութեան սկատմառաւ, նոյնպէս ալ օրիորդք սընդոյրի, նեղ հանդերձանքներու եւ մանաւանգ ֆօրսէի պատճառաւ իւրեանց կենաց մեծագոյն մասը կորուցնելէն 'ի զատ՝ մնացեալ կեանքերնին ալ անտանելի կ'ընեն, եւ դարձեալ ինչպէս որ երիտասարդք իրենց հեշտական մոլութեանց պատճառաւ բարի եւ օրինաւոր ամուսին լինելու անյարմար կ'լինին, նոյնպէս եւս օրիորդք իրենց վտանգաւոր եւ եղծիչ հանդերձանքներով եւ զարդարանքներով բոլորովին անյարմար կ'լինին ամուսնանալու եւ ՄԱՅՐ լինելու։ մեր այս ըսածը ապացուցանելու համար շատ նեղութիւն չունիմք քաշելու, ինչու որ անթիւ օրինակներ ունիմք առջեւնիս համապուելու համար թէ՝ այն աղջիկները որ ֆօրսէի սովորութեամբ իրենց մէջքին ձեւն բնականէն հեռացուցեր են՝ շեն կրնար հանդիստ կատարել այն ամեն պարտաւորութիւնները որ իգական սեռէն կ'սկահանջուի ամսական արեան սովորութիւնը որ զրեթէ առանց նեղութեան կ'անցընեն բնական կանայք, տաժանելի նեղութիւններով կ'կատարեն վերոյիշեալ զարդարէր օ-

\* Տե՛ս պատկեր առաջին :

\*\* Տե՛ս պատկեր երկրորդ :

րիորդները կամ կիները . յղութեան միջոցը որ զրեթէ անտարբերութեամբ զուարթութեամբ կ'անցնեն Պարզասէր կանայք , անկրելի տագնապներով եւ վտանքներով կ'անցնեն Նորասէր կանայք . եւ ծննդաբերութիւնը , կամ որդեծնութեան պաշտօնը որ հազիւ զգալով կ'կատարեն իրենց բնական ձեւը չի եղծող կանայք . անստորագրելի ցաւերով , եւ շատ անդամ ալ մեռնելով կը կատարեն Քօրսէի սիրահարները :

Բաց 'ի ասոնցմէ ուրիշ մէկ պատճառ մի ալ կայ որ գեղեցիկ սեռին վիճակը եւ կեանքը տաժանելի կընէ որոյ վերայ ալ եթէ քանի մը խօսք ընեմք աղէկ կը լինի :

Յայտնի է որ Երիտասարդ մը ինչ եւ իցէ պատճառաւ թէ որ զրկուի ամուսնական կենաց մէջ մտնելէ , գոնէ նա իւր ցանկական կիրքը թէ եւ ասլօրինաւորութեամբ եւ ցաւալի հետեւանքներով , կրնայ յազեցընելսակայն աղջիկները որ Երիտասարդներէն աւելի պարկեշտ լինել կ'պարտաւորին , այս մասին մէջ այնքան կը տանջուին որ բաւական բառ չունիմք ստորագրելու բնութիւնը բոլորովին աննկատ մարդկային վրիոլման պատճառաւ սովորականութեան , տիրապետութեան , ժամանակին . (Քաղաքականացեալ օրիորդները որ՝ Արամիրութեան գերի են շատ անդամ ժամանակէն առաջ արտունքի կ'հասնին , որ շատ վտանգաւոր է իգական գրութեան) իւր օրինաց համեմատ օրիորդները արբունքի կ'հասցընէ եւ կիմացնէնսցա թէ իրենք կնութեան այսինքն յղութեան եւ որդեծնութեան սպարտաւորութիւնը կատարելու պատրաստուելու են , բնութեան այս մղումը այնքան զօրաւոր է որ (ինչպէս անհամար փորձեր ալ յայտնած են) բան մը չկրնար նորա դէմդնել . Քաղաքականութիւնները որ գրեթէ առաջին ազդեցութեան տէրերն են աշխարհիս եւ մարդկային ընկերութեան վրայ , այս մասին մէջ ինչ օրէնքներ ալ որ դրած են՝ օգտագործ չունին . բնութիւնը տակաւին ան-

յաղթելի մնացած է անոնց դէմը . սովորութիւնները որ քաղաքականութիւններէն քիչ մը պակաս (Երբեմն շատ աւելի) ազդեցութիւն ունին այս մասին մէջ, բոլորովին յաղթուած եւ խայտառակուած են բնութեան ահարկու հարուածներուն առջեւ . իսկ կրօնքը որ ամենէն աւելի բարձրագլուխ կ'պանծայ մարդկային սեռին վրայ՝ վերահասու լինելով բնութեան զօրութեանը քիչ կամ շատ խոնարհած են անոր առջեւ . վերջապէս որ եւ իցէ ազդեցութիւնք բնութեան գեղեցիկ սեռին տուած այս պաշտօնը յարգել եւ մեծարել պարտաւորուած են՝ նորա դէմ ուղղակի եւ կամ անուղղակի կերպով քիչ մը ժամանակ կենալնուն վերջը :

Արդ բնութեան այս հզօր ազդեցութիւնը երբ առաջին անգամ կ'արթնցնէ օրիորդ մը զանի արբունքի հասցնելով, անմիջապէս սրտի նոր զդացում մը կ'ծագի նորա մէջ, այսպիսի զդացում մը՝ որով օրիորդը կ'պարտաւորի ուրիշ աջքով նայիլ իւր շուրջը գտնուած այն երիտասարդաց վերայ, որոնք մինչեւ այս կէտ հազիւ թէ իրեն համար տարբերութիւն մը ունէին ուրիշներէ . ահա այս է այն նշանաւոր վայրկեանը երբ բընութիւնը օրիորդ մը իր ձեռքը կառնու՝ իր այն նուիրական նպատակը յառաջ տանելու դիտաւորութեամբ, որով միայն հնարաւոր է մարդկային ցեղին գոյութիւնը . արդ խորհիլ օրինաւոր է թէ՝ բնութիւնը իւր այս նպատակը յառաջ տանելու համար ինչ զօրութեամբ պիտի պատերազմի բոլոր սովորական այն միջոցներուն դէմ, որոնք կերպով մը կ'ջանան իւր այս պաշտօնը արգիլելու, եւ մանաւանդ իւր ձեռքն անցուցած օրիորդը որքան պիտի տանջէ՝ երբ տեսնէ նորա կամ անտարբերութւնը այս մասին մէջ եւ կամ 'ի գործ դրած ապօրինաւոր եղանակները . . . հնարաւոր է արդեօք որ բնութիւնը առանց պատիժի թողու այն աղջիկը՝ որ կամ իւր հրամանին անտարբեր կ'մնայ եւ կամ սովորական քաղաքավարութեան պահանջմանց համեմատ՝

ապօրինաւոր միջոցներու ձեռք կ'զարնէ՝ բնութեան իւրեն ազդած սրբազան մղումը յառաջացնելու համար :

Որքան յայտնի է թէ օրիորդները պարտին առաջուց ուսանիլ ինչ որ իրենցմէ կ'պահանջուի կամ սկիտի պահանջուի . միթէ անգութ չէ սովորութիւնը որ զանոնք արգիլելով այս ուսման տեղեակ լինելու կ'թողւզանոնք առանձին՝ որ մաքառին բնութեան պահանջմունքներուն դէմ, եւ կամ ծուռ միջոցներու դիմեն եւ դառնապէս պատժուին . մեծ իրաւունք ունի իգական սեռ արական սեռին եւ սովորութեան դէմ բողոքառնալու, ինչու որ այս ետքիններուս պատճառաւ նատգիտարար ինքզինքը այնպիսի աղետալի կացութեան մը մէջ դրած է, ուր անկրելի տանջանքներ զինքը կ'այրեն եւ կ'տոշորեն . . .

Բնութեան ճայնը հզօր է, եւ ով որ նորա դէմ կը դործէ, անսլատմառ սկտք է որ սլատժուի . Բնութիւնը չիկրնար զանազանել տգիտն ու գիտունը, այլ ով որ իր օրէնքներուն չիհնազանդիր՝ կ'պատժէ . . . թոյնը մարդ կ'սպաննէ, հոգ չէ թէ խմողը նորա վլրայ հմտութիւն կամ գիտութիւն ունի թէ ոչ . այսպէս ալ բնութիւնը ամենեւին չի կրնար եւ չի պարտիր մը տածել թէ իւր օրէնքները եղծողները որոնք են եւ կամ ինչ պատճառներով կ'եղծեն . նա չկրնար իգական սեռ գեղեցիկ, փափուկ եւ կամ զանազան բռնութեանց սլատճառաւ իւր օրէնքները եղծել ստիսլուած ինելնուն համար խնայել անոնց . չէ, բնութիւնը Աստուծոյ ճայնն է, Նա անփոփոխելի եւ անդիմադրելի է . ամենայեսին արարածներէն սկսեալ մինչէւ մարդս, գերիներէն սկսեոլ մինչեւ թագաւորք, ճիւաղներէն սկսեալ մինչեւ հրեշտակք՝ սլարախն Նորա ամեն օրէնքներուն հնազանդիւն թէ որ կ'փափաքին ազատ մնալ կծու եւ ցաւալի պատիժներէ եւ երջանիկ կեանք մը վսյելել . ուստի իգական սեռն ալ բնութեան այս ազդեցութեան ներքեւ դանուած լինելնուն չեն կրնար

ամենեւին այնպիսի սլաշտուան մը գտնել որ կարող լինի ազատել զինքը՝ երբ ինքն բնութեան ազդեցութեանց համեմատ այս կամայն սլատճառներով չհնագանդիր .

Արդ մեր վերոգրեալ ճշմարիտ եւ անհերքելի դիտողութիւններնէս յայտնասլէս կը տեսնուի թէ մեր Ազգին իգական մասը՝ սովորութեան սլահանջմանց ազդեցութենէն ստիպեալ լինելով բնութեան չի հնազանդիլեւ կամ թէ ուսանիլ նորա օրէնքները , հարկաւ սյսօր նա այնպիսի թշուառ կացութեան մը մէջ գտնուելուէ որ խիստ արժանի լինի կարեկցութեան , ըստ որումքանի որ մենք արականքս՝ ամեն ազատութիւն ունիմք մեր ամենասզօրաւոր մէկ տենջանքին ուզածնուս պէս յագենաւմտալու թէ օրինաւորութեամբ եւ թէ ապօրիրինաւորութեամբ , եւ քանի որ իրբեւ դաժան բռնաւորք՝ ստիպած ենք իգական սեռը որ սանձ դնէ իւր զգացմանցը եւ սպասէ մինչեւ որ մէկն զինքը կողակից ընտրէ , շատ պարզ է տեսնել թէ այս իրողութիւնը կամ սովորութիւնը բնութեան ազդեցութեան հետ միանալով պիտի ճնշէ գեղեցիկ սեռը , եւ թշուառացնէ զայն մարդկային սեռին այս բռնած ընթացքը օրինաւո՞ր է թէ ոչ , հարկ չիկայ այժմ հոսյիշել . սակայն սա ալչենք կրնար մառնալ յիշելու՝ թէ շատ հնարաւոր էր եւ է որ իգական սեռն ալ կարենայ իւր այս նուաստ կացութիւնէն ազատիլ եթէ նա ալ ընդունուի իրը հաւասար ընկեր եւ օգտակար մաս մարդկային ընկերութեան . այն, թէ որ աղջիկները արգիլուած չլինէին արականաց միահաւասար լինելէն՝ այսօր ինչպէս երիտասարդ մը նոյնալէս ալ օրիորդ մը ուզած ժամանակը ամսւսնանալու կարող եւ ազատ պիտի լինէր , որով եւ պիտի փըրկուէր նա բոլոր սյն նեղութիւններէն եւ ցաւերէն , որոց այսօր անմեղ ենթակայմը եղած ենիսեղճ քյրերնիս եւ կամ մեր ընկերութեան ազնիւ եւ գեղեցիկ մասը :

Խեղճ օրիորդներ , դուք ամուսնանալու եւ կամ մարդ-

կային ազգին օգտակար անդամներ լինելու համար այնպիսի հանգամանքներ ունենալու կ'պարտաւորիք որ այժմ արդիսովութեան տիրապետութեան ժամանակ անհնար է ձեզ որ ունենաք, վասն զի քանի որ երիտասարդութիւնը առանց վայրկեան մը կորսընցընելու կ'փափաքի զձեզ տեսնել փառաւոր եւ դեղեցիկ, եւ քանի որ դուք մեծ իրաւամբ (անոնց կարօտ լինելուդ սլատմառաւ) անոնց այս փափաքը (համակրութիւննին վաստկելու) կատարելու համար սովորուած էք ձեր բոլոր ժամանակը անձերնիդ վատնելու, նոցա հաճութեան յարմար սլատրաստելու, եւ քանի որ ձեր բոլոր այս ջանքերն ալ շատ անգամ ապարդիւն կմնան, եւ որովհետեւ մէկ կողմանէ ալ բնութեան ձեռքը վրանիդ ծանրացած է . . . ահ, ինչպէս կարելի է ձեզ օրինաւոր ամուսին եւ մայր լինելու համար, հարկ եղած հանգամանքներն ստանալու համար ժամանակ, միջոց եւ ՍԻՐՏ ունենալ . . . ահ երիտասարդներ, դարձեալ ձեզ դառնալու կ'ստիպուիմ, ձեզ՝ որ չէ թէ միայն ինք զինքնիդ կ'սպաննէք զանսպան հեշտութիւններով, այլ դեղեցիկ սեռն ալ կ'ստիպէք որ իրենց գլխաւոր պարտաւորութեան պատրաստուելու ժամանակ չունենան:

Վերջապէս այս ցաւալի իրողութեանց վրայ ալ առանց երկարաբանութիւն ընելու՝ մեր ընթերցողաց ուշադրութիւնը թախանձանօք կ'հրատիրեմք մեր ազգին երիտասարդաց եւ օրիորդաց վրայ, յուսալով որ իրենք եւս մեզ հետ տեսնելով նոցա կարեկցութեան արժանի կացութիւնը, պիտի ջանադիր լինին այնպիսի մարդասիրական աշխատութիւն մը վրայնին առնելու որով միայն հնարաւոր է մեր Ազգին արդի սերունդը ազատել մահուան ճիրաններէն եւ միանգամայն փրկել ապագայ սերունդնիս. ապագայ սերունդնիս՝ որոյ վըրայ այժմ ես սոսկալով կնայիմ, եւ շատ համոզուած եմ որ եթէ արդի երիտասարդները եւ օրիորդները չառաջնորդուին օրինաւորութեան, անշուշտ մեծ կորուս

սլիտի ընէ մեր ազգը կէս դարէն վերջը , եւ ունայն պիտի ելեն բոլոր այն ջանքերը , որ այժմ մենք 'ի գործ դնելու վրայ եմք իրեւ յօգուտ ազգային , լուսաւորութեան , յառաջադիմութեան եւ բարեկարգութեան :

Այս գլուխս վերջացնելէս առաջ հարկաւոր կ'սեպեմ այնողիսի սկզբունքի մը նկատմամբ մէկ երկու խօսք ընելու որ՝ քանի որ նա ընդունելի լինի մեզ , անհնար պիտի լինի մեր երիտասարդաց եւ օրիորդաց եւ հետեւաբար ապագայ սերունդներնուս ազատութիւնը եւ երջանկութիւնը : Ժամանակէ մը հետէ հետեւեալ սկըբրունքը սկսած է մեծ ազդեցութիւն ունենալ , որ է աս

" ԴԵՌ ՃԱՄԱՆԱԿԸ ԶԷ " :

Այս յիմարական սկզբունքը որ անշուշտ յետադիմութեան սիրահարներու մտաց մէկ այլանդակ 'ծնունդն է , այնքան անհիմն է որ հազիւ թէ մարդ կրնայ հաւստալ թէ խելքը գլուխը եւ սկզբունքի տէր մէկը կարենայ նորա սլաշտան կանգնիլ , վասն զի քանի որ մարդկային մտաց կարողութիւնը « ազգային քաղաքականութիւն , կոչուած մէկ անորոշ գիտութեան մը մէջ բնակչութեան ամենեւին յառաջ գացած չէ , քանի որ բոլոր անցեալ փորձառութիւնք այս մասին մէջ ամենեւին լոյս մը ձգած չեն ապառնիի վերայ , եւ քանի որ մարդս այսօրուընէ եւ այս վայրկեանէս անդին չէ կարող տեսնել , ինչ գըլխաւոր պատճառներով կամ մաթէմաթիքական հաշիւներով կրնայ ճշմարտութեան մը կամ օդտակար սկըբրունքի մը յայտնուիլը ապառնիի թողուիլ . ով կրնայ երբէք գտնուիլ այնքան համարձակ եւ յանդուգն որ կարենայ զիս համար թէ ասկէց մէկ տարի վերջը մեր ազգին վիճակը սա որոշ կացութիւնը պիտի ունենայ . ապա ուրեմն ինչո՞ւ համար քանի մը դեռ գիտութեանց եւ բնական արհեստից եւ ուսմանց վրայ արդէտ եղողներ « դեռ ժամանակը չէ » սկզբունքը սլաշտանելու եւ տարածելու ելած են . . . եւ ինչ նշանաւ




Պատկեր Գ.



կութիւն ունի իրենց սյու քարոզութիւնը՝ քանի որ ի-  
րենցմէ ոչ մէկը կարողութիւն ունի ըսելու թէ՝ մեր  
աղգին վիճակը այսինչ ժամանակ այնինչ կացութիւնը  
պիտի ունենայ, եւ քանի որ աշխարհիս պատմութիւ-  
նը կը ցուցնէ որ ամեն ճշմարիտ եւ մարդկային ընկե-  
րութեան շահաւետ սկզբունքներ իրենց հրատարակու-  
ած օրէն մինչեւ ընդունուած օրերնին դատապարտու-  
եցան եւ անոնցմէ շատերը մեծամեծ արիւնչեղութիւն-  
ներու պատճառ եղան. միայն յօսով սսլասող, մաթի-  
մաթիքական կամ տրամաբանական հաշիւներէ վախ-  
ցող եւ շարունակ «դեռ ժամանակը չէ» երգը երգող-  
ները լսած չունին թէ Քրիստոնէական ճշմարտութիւնը  
քանի ահարկու կոտորածներու եւ գայթակղութիւն-  
ներու պատճառ եղաւ. միթէ յիշեալ ճշմարտութեանը  
հիմնադիրը չիսորհեցան թէ «դեռ ժամանակը չէ»,  
դարձեալ տասն եւ վեցերրորդ դարու բարեկարգիչնե-  
րը եթէ մտածէին թէ «դեռ ժամանակը չէ» պիտի  
կրնային Եւրոպիոյ արդի ազատութեան պատճառ լի-  
նել. միթէ նոքա չի խորհեցան թէ ժամանակը մէկ  
գիշերուան մէջ ութսուն հազար մարդազոհ պիտի պա-  
հանջէր իրենց պաշտպանած ճշմարտութիւնը տարածե-  
լու համար, եւայլն, եւայլն. ուրեմն իմաստակութեան  
ամենախայտառակ մէկ սկզբունքը չէ «դեռ ժամանա-  
կը չէ» «ծիծաղելի խոռքը»:

Արդ կը յուսամ որ ամեն ճշմարտասէր ընթերցող  
աւելի իմ յառաջ բերած սկզբունքներուս ճշմարտու-  
թեանը պիտի նային, քան թէ ժամանակին, ժամանա-  
կին որ միշտ անորոշէ, եւ հետեւաբար ամեն անհատ  
պիտի ջանադիր լինի տարածելու այն սկզբունքները  
որ այս տետրակիս մէջ յիշուեցան եւ պիտի յիշուին  
յօգուտ Հայ աղգին եւ մարդկային չէնքին.

---



Երիտասարդաց եւ օրիորդաց բռնած վտանգաւոր  
ընթաց քները եւ նոցա արդի չարագուշակ կացութիւնը  
բացատրելէս յետոյ՝ բնականաբար այս չարեաց գլխա-  
ւոր եւ երկրորդական պատճառները պարտիմք յայտ-  
նել, որպէս զի ամեն զաւակասէր եւ Ազգասէր ըն-  
թերցողներս կարենան այս չարեաց առջին առնուլ.

Որովհետեւ ամեն օրինաւորութեան սկզբնապատճառը բնութիւնն է . ուրեմն այս տեսակ եւ ամեն ապօրինաւորութեանց պատճառները բնութենէն դուրս փնտռելու եմք .

ՄԵՆՔ ՄԵՐ ԲՈԼՈՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ 'Ի ԳՈՐԾ ԴՆԵԼՈՎ  
ՏԵՐ ԴԵՐԱԲՈՅՍ ՍԵՐՈւՆԴԻՆ աՐԴԻ ԵՐԿԻՒՂԱԼԻՑ ԸՆԹԱՑ-  
ՔԻՆ Եւ ԿԱցութեանը հետեւեալ սպատճառները գտանք  
որոնց վրայ մի առ մի խօսիլ օրինաւոր է :

Ա. ՏԳԻՏՈՒԹԻՒՆ. Գիտութեանց, ուսմանց եւ ար-  
հեստից պակասութիւնը, (որ տգիտութիւն բառով  
կրնանք հասկնալ՝ այս բառին քաղաքականացեալ աշ-  
խարհին տուած իմաստովը) մարդկային որ եւ իցէ ըն-  
կերութեան համար մեծ յանցանք է. ըստ որում մարդ  
ուրիշ ամեն արարածներէն աւելի՝ ընկերական լինելով,  
եւ իւր վայելմունքները՝ բազմաթիւ՝ հարկ եւ օրինա-

\* . Խիստ ցաւալի է ըսելը որ մարդկային ազգին ենթակայեղած թշուառութեանց մէկ ամենամեծ պատճառն ալ վայելմանց վրայ ունեցած ծուռ և յիմարական գաղափարն է . այո՛ մարդս քա-

որ է որ Նա տեղեակ լինի բոլոր այն գիտութիւններուն, ուսմանց եւ արհեստից՝ որոնցմով կրնայթէ երկիրս բարեբեր եւ թէ իւր ընկերական կացութիւնը ապահով ու երջանիկ ընել, այն իսկ գիտութիւնները, ուսմունքները եւ արհեստները որոնց կարեւորութիւնունի, պէտք է բնական\* լինին, որպէս զի գոնէ կարենայ դար մը ապրիլ առանց հիւանդ եւ ապերջանիկ լինելու:

Տգիտութիւնը, որ մեր ազգին ինկած այսօրուան բաժիննէ՝ զինքը այնքան ապերջանիկ ըրած՝ է որ հազիւ թէ կարելի է նկարագրել, բայց որովհետեւ մեր արդի աշխատասիրութիւնը չի ներէր որ ընդհանուր խօսիմք, մասնաւորել կը պարտիմք խօսքերնիս յայտնե-

նի որ իւր երջանկութիւնը քարաշէն և փառաւոր տուններու, մետաքսեղէն բաղմածախ հանդերձներու, անդամանդներու և ասոնց նման խելմը տանջանքներով և վտանգներով ձեռք անցուելիք զարդարանքներու մէջ կը փնտռէ՝ չի կրնար ամենեին երջանիկ լինիլ. քանի որ շատ հնարաւոր էր որ մարդս իւր իրական վայելքները ճանչնալով պարզութեան հետևէր, որով և վերնար շատ մը թշուառութիւններ ալ՝ որոնց վրայ տգիտութիւնը կ'ընայի իբր այս աշխարհիս սեփհական և վերին տեսչութեան պատուհամները . . . պատմութիւնը մեղի տամնեվեց տարեկան օրիորդ մը կներկայացնէ որ փափաքած ձեռք մը մետաքսեայ հանդերձը ձեռք չի կրնալով անցունել ինքզինքն սպաննած է:

\* Եւրոպիոյ և Ամերիկայի բոլոր խմաստասերները արդէն ըսկած են սաստիապէս բողոքել այն ամեն արհեստներուն և գիտութեանց դեմ, որոնք անընական լինելով մեծամեծ թշուառութեանց պատճառ եղած են. մարդս մինչև գերեզման մտնէ պարտի այնպիսի գիտութեանց, ուսմանց և արհեստից հետևի՝ որոնք իւր երջանկութեանցը արգելք չլինելէն իղատնապաստեն նաևս իւր առողջութեանը և երկարակացութեանը՝ որոնք են միայն մարդկային երջանկութեանց աղբիւրները . . . " ինչ օգուտ եթէ մարդ բոլոր աշխարհը շտհի և իւր անձը կորսնցնէ . . . "

լու համար թէ մենք մեր անձին վերաբերեալ գիտութեանց եւ ուսմանց անտեղեակ լինելուս համար է որ մեր երիտասարդները եւ օրիորդները ազգային շէնքը բնաջինջ ընելու ընթացքն եւ կացութիւնն ունին, քանի որ իրողութիւնը ասոր հակառակը պիտի լինէր թէ որ ամեն պատանիք եւ աղջիկներ իրենց անհտական շէնքին եւ կազմութեան վրայ լաւ հմտութիւն եւ իրենց կազմութեան պահանջմունքներուն տեղեակ լինէին. խիստ ստոյգ է թէ երիտասարդ մը թէ որ գիտնար իւր ներքին եւ արտաքին գործարաններուն կազմութիւնը եւ կեանքն երկար եւ առողջ լինելու համար անոնց հարկ եղած հսկողութիւնները, անշուշտ հարիւրին իննսուն պիտի հեռու կենար նա անբնական ուտելիքներէ եւ խմելիքներէ եւ գործողութիւններէ. Այո՛ պատանի մը երբ ուսանի թէ իւր ստամոքսը կ'եղծուի ամեն իւղու եւ արհեստական կերակուրներէ, հարկաւ ետ պիտի կանգնի այնպիսի կերակուրներէ որոնք կալջուն են, նմանապէս թէ որ նա ուսանի թէ ծննդական գործարանները իրենց կատարելութեան հասնելու համար գոնէ քսանեւչորս տարիներու կարօտ են եւ թէ անկից առաջ զանոնք գործածելը խիստ մահութ արգասիքներու պատճառ կը լինի, հարկաւ նա հեռու պիտի կենար գիճութենէ եւ հեշտական շոայլութիւններէ, ասոնց նման՝ թէ որ աղջիկներն ալ գիտութիւն ստանային իրենց կուրծքին, ստամոքսին, ներքին եւ արտաքին ծննդական գործարանաց եւ անոնց պահանջմունքներուն վերայ, հարկաւ հարիւր օրիորդներէն իննսունը պիտի փրկուէր՝ ֆօրսէի նման եւ ուրիշ կենսասալառ գործողութիւններէ, իսկ ընդհանակը քանի որ սնոտի պարկեշտութիւնը եւ սովորութիւնը արգելք կը դնեն այս գիտութեան տարածմանը, եւ քանի որ այս պատճառներով դեռարոյս սերունդը տգէտ կը մնայ մարդակազմական գիտութեանը, նորասիրութիւնը իւր ամեն զարհութելի հետեւանքներու

վը . գիճութիւնը եւ հեշտական շռայլութիւնը իրենց  
ամեն սպառիչ արդասիքներովը պիտի տիրապետեն  
նոցա վերայ , ոպաննեն զանոնք , թողլով մեզ որ ող-  
րանք նոցա վրայ շարունակ՝ , եւ հայհոյեմք Աստու-  
ծոյ դէմ ըսելով ։ Աստուած տուաւ Աստուած ա-  
ռաւ , \* իբր թէ Աստուած մեզի նման ըրածը չըրածը չի-  
դիտցող մէկն է , որ այսօր կըստեղծէ վաղն մեռցնելու  
համար , ծնողք կընէ մեզ որ արտասուք թափեմք մեր  
կորսնցուցած զաւակներնուս դիակներուն վրայ ։

Այս աշխարհիս մէջ թշուառութիւն չի կայ ամենե-  
փին . մեծ հայհոյութիւն է ասոր հակառակ քարոզելը .  
վասն զի մեր ամեն թշուառութիւններնուս պատճառը  
մենք ենք . մենք որ մեր անձերուն եւ բնակած աշ-  
խարհքնուս վերաբերեալ գիտութիւններէ խորշելով՝  
կը զրկուինք բոլոր այն օրհնութիւններէն որոնք մեր  
վայելման համար բնութեան իշխանը մեզի տուած է ։

Ալ հարկ չիկայ կարծեմ աւելի խօսիլ այս կէտիս  
վրայ , վասն զի թէ մեր ըսածներէն եւ թէ անհամար  
փորձերէն յայտնի է իմէ դեռաբոյս սերունդին արդի  
ընթացքին եւ կացութեան միմիայն պատճառը տգի-  
տութիւնն է , տգիտութիւնը՝ որոյ դէմ կամ սէտք է  
պատերազմ յարուցանեմք եւ կամ թէ ոչ պարտիմք  
ընաջինջ լինիլ ։

Բ . ԿԱԵՐ . Մեր աղգին այս մասին մէջ ունեցած  
տգիտութեան պատճառը եւ հետեւաբար երիտասար-  
դութեան ցաւալից ընթացքին եւ կացութեան երկրո-

\* Այս հայհոյութիւնը շատ անգամքահանայից բերնէն կըուի  
որոնք ծնողքները միմիթարելու համար կդորժածեն , երբ կերթան  
նոցա մեռած զաւկներնին գերեզման տանելու . քահանայութիւնը  
ո՞ւր , մեր տէրպապաները ուր . Աստուած բարի ճանապարհ տայ  
մեր ազգին . ո՞ր մէկ թշուառութիւննիս ողբանք . չեմ դիտեր թէ  
դեռ չի պիտի ամչնամք աշխարհիս վրայ իքզինքնիս իբրև ազգ ճանչ  
նալնուս համար :

գական շարժառիթը եթէ կղերն է ըսենք երբէք սխա-  
լած չեմք լինիր, վասն զի մեր կղերը որոյ միմիայն  
պարտաւորութիւնը իւր հսկողութեանը յանձնուած  
ժողովուրդին բարեացն եւ երջանկութեանը համար  
հարկ եղած խրատները տալ է, այս մասին մէջ այն-  
քան անհոգ եւ անտարբեր գտնուած է որ մարդ մեծ  
իրաւամբ կրնայ նոցա վրայ նայիլ իրը հանրութեան  
թշնամի եւ իւր պաշտօնին անհաւատարիմ գտնուող  
կազմութիւն մը\* :

Մեր կղերը կը պարտաւորէր մտածել թէ իրենց  
այս անհոգութիւնը այնքան սոսկալի եւ զարհուրելի  
արգասաւորութիւններ պիտի ունենար, այնքան կո-  
տորածներու պատճառ պիտի լինէր որ օր մը ժողո-  
վուրդը արթննալով երբ տեսնէր իւր երկիւղոլից կա-  
ցութիւնը, հարկաւ իւր մարած աչքերը առաջին ան-  
գամ կղերին վրայ պիտի դարձներ եւ եթէ ոչ բանիւ  
գոնէ սրտին մէջ) անէծք պիտի կարդար նորա դէմ,  
նորա դէմ՝ որ միայն իւր անձին երջանկութեանը հա-  
մար կղերականութիւն կազմուծ էր, առանց ամենեւին  
կարեկցութիւն եւ գութ ունենալու այն անմեղ ժողո-  
վուրդին վերայ որ զինքն իրեւ իւր առաջնորդը եւ

\* Հատերը կան որ մեր կղերին այս դատապարտելի անհո-  
գութեանը և անտարբերութեան պատճառը նոցա տղիտութեանը  
կուտան, այո՛ ես ալ կը խոստուանիմ որ մեր կղերը տղէտ է. բոյց  
սա ալ գիտեմ թէ նոքա իրենց տղիտութիւնը չիջանչալէն և չի-  
խոստուանելէն, և շարունակ ինքզինքնին հայութեան փրկիչ և ա-  
զատիչքարողելնէն իզատ, շատ խելացի և վարպետ գտնուած են  
իրենց անձերնուն ապահովութիւնը, փառաւորութիւնը, հարըս-  
տութիւնը, ճոխութիւնը և իշխանութիւնը պահելու մէջ. տղէտ  
են այո՛, տյլսակայն շատ աղեկ գիտեն ժողովրդեան ստակները  
առնուլ, նոցա վրայ իշխել, և բարձր տեղեր նոտիլ, ընդհանուր  
աշխարհականք չկրցինք մինչև այս օր համոզել մեր կղերը թէ ինքն  
տղէտ է և այս պատճառաւ մեծամեծ չարիքներու դլխաւոր պատ-  
ճառ, չիկրցինք դեռ վարդապետ մը համոզել թէ ինքն արժանի  
չէ Եպիսկոպոսութեան :

բարերարը կը ճանչնար եւ սուստութեամբ կը վար-  
ձատրէր :

« Մեր պաշտօնը հոգեւոր է » ըստ ինձ եսլիսկոպոս  
մը երբ այս կէտիս վրայ իրեն խօսեցայ « մենք ոչ բը-  
ժիշկ եմք եւ ոչ արհեստաւոր » սակայն փթամիտը  
չիսորհեցաւ թէ ի՞նչ պիտի պատասխանէր ինձ երբ  
իրեն հարցնէի թէ — մեծդ եսլիսկոպոս ինչպէ՞ս հնա-  
րաւոր է որ ես տգէտ, անուսումն եւ պարզ աշխար-  
հականս չի տարակուսիմ Քրիստոնէական կրօնին ճըշ-  
մարտութեանը վրայ, երբ կը տեսնեմ քեզ ոէր, գութ  
եւ ողորմութիւն քարոզող, եւ միանգամայն քեզի  
յանձնուած ժողովուրդին բնաջինջ լինելու վտանգը  
տեսած ժամանակդ « Ես բժիշկ չեմ » աղաղակող . Այո՛  
մեր կղերը միշտ հանդերձեալի վրայ խօսիլ կուզէ,  
բայց ոչ այս աշխարհիս վրայ, նա միայն « մեղք մի՝  
գործէք, բարեգործութիւն ըրէք » կը պոռայ որ ա-  
մենեւին նշանակութիւն չունեցող խօսքեր են, վասն զի  
պարզ ժողովուրդը ինչպէս կրնայ մեղքի վրայ գաղա-  
փար ունենալ՝ երբ կղերը իրեն չի բացատրէր, եւ  
նեղը մնալուն պէս « մեղքերդ քաւուելու համար բա-  
րեգործութիւն ըրէ » կ'ըսէ, չի մտաժելով դարձեալ  
թէ այս քարոզութեամբ չէ թէ միայն ժողովուրդը ան-  
ցեալ մեղքերուն համար բնութեան տնօրինած պա-  
տիժներէն չի կրնար աղատիլ, այլ նաեւս կը շարու-  
նակէ իւր մեղքերը, քանի որ իւր կղերէն կ'ուսանիթէ  
իւր մեղքերը քաւելու համար՝ բարեգործութիւնը կա-  
րեւոր է . այո՛, այս անհիմն քարոզութիւնները մի-  
այն կը բաւէ ժողովուրդ մը կործանելու, ինչու որ ա-  
սով թէեւ ամեն մարդ մէկզմէկու բարիք կ'ընէ, այլ  
սակայն ամեն անհատական չարիքներ անպակաս կը լի-  
նին, եւ կամ ճիշտ այնքան մեղքեր կը շատնան՝ որ-  
քան որ բարիքներ կը գործուին, եւ շատ հաւանական  
է որ չարիքները թէ թուով եւ թէ չափով բարիքնե-  
րէն աւելի ծանր լինին . վասն զի մեր կղերին այս օ-

բուան ըրած քարոզութեանը կամ պաշտպանած սկըզ-  
բունքին նայելով մարդ մը կրնայ գիճութիւն ընել .  
հեշտական շռայլութեանց հետեւիլ , ատել , խաբել ,  
պատրուակել , մէկուն մէկալին տունն աւրել , եւ վեր-  
ջը պարզ խոստովանութեամբ մը , ուխտի երթալով  
մը , քահանային պատարագցու մը տալով , Եկեղեցիի  
մը բան մը նուիրելով եւ կամ էն շատը անկար աղ-  
քատի մը քիչ մը ողորմութիւն ընել եւ ազատիլ իւր  
մեղքերէն :

Կղերը կը սլարտաւորէր գիտնալ թէ ամեն յան-  
ցանք որ կը գործուի երբէք ներելի չէ , այլ բնութիւ-  
նը միշտ արթուն է պատժելու ինչ որ իրեն դէմ կը  
գործուի , եւ թէեւ լինի որ Աստուած նոյն յանցանք-  
ներուն պատիժը չփոյտ հանդերձեալ աշխարհի մը մէջ  
գործողներուն զղջումը լսելով եւ նոցա վրայ գթալով՝  
սակայն բնութիւնը ամենեւին անսլատիժ յանցանք մը  
չի թողուր քանի որ յանցաւորը այս աշխարհիս մէջ է .  
գիճութեան եւ հեշտական շռայլութեանց սլատմառաւ-  
զանազան հիւանդութեանց ձեռք մատնուած երիտա-  
սարդ մը կրնայ զղջալ ըրածին վրայ , կրնայ քահանա-  
յին խոստովանիլ , կրնայ ողորմութիւն տալ , կրնայ  
պատարագ ընել տալ , սակայն ասանկով կրնայ ազա-  
տիլ իւր հիւանդութիւններէն , բնութիւնը ասոնցմով  
գոհ կը լինի , եւ իւր սլատիժները ետ կառնո՞ւ , մինչեւ  
որ նա բնութեան յարմար ճամբով եւ բժշկական դե-  
ղերով ինքզինքը չի դարմանէ եւ ալ եւս յիշեալ մո-  
լութիւններէն ետ չի կենայ . Արդարեւ թէ որ մեր կը-  
զերը որքան որ իւր անձին նոյնքան ալ մեր աշխար-  
հականացս վրայ կարեկցութիւն եւ գութ ունենար ,  
շատ երանելի սկիտի լինէինք մենք . վասն զի մենք  
սովորած լինելով կղերին ամեն մէկ խօսքերը իրեւ  
պատգամ ընդունել , ո՞րքան հեռու սկիտի փախչէինք  
մոլութիւններէ , թէ որ կղերը խմատասիրաբար բա-  
ցատրութիւն տար մեզ մեղքերուն բնութեանը եւ ինչ-

պէս բարոյական նոյնպէս ալ նոցա բնական վտանգաւորութեանը վրայ . որ զինեմոլն պիտի համարձակէր իւր մոլութիւնը շարունակել՝ եթէ կղերը ոգելից ըմպելեաց բնութեանը եւ անոնց մարդկային ներքին գործարանաց վրայ ունեցած դժնդակ եւ կատաղի ազդեցութիւններուն վրայ լուսաբանէր , փոխանակ ԼՈԿ « զինեմոլութիւնը մեղքէ , մի խմեք , հոգինիդ դժոխքը կերթայ » անորոշ եւ ոչ շատ վստահելի քարոզութիւններուն , որոնք շատ ազդեցութիւն չեն կրնար ընել մարդուս մտքին , եւ մանաւանդ քանի որ պատիժը դալիք աշխարհի մը մէջ է , եւ անկից ալ ազատիլը բան մը չէ՝ քանի որ բարեգործութիւն եւ զղումկայ :

Ահաւասիկ այսուհես մեր կղերին անհոգութեանը պատճառաւ Երիտասարդք եւ օրիորդք՝ մեր ազգին ամենէն զօրաւոր եւ քաղցրիկ յոյսերը ինքզինքնին կ'ըսպաննեն , եւ մենք դեռ տարտամ կացութեան մը մէջ կանգնած չենք պահանջեր կղերէն որ արթննայ եւ պարտաւորութիւնները կատարէ , եթէ ոչ Ասուուծոյ եւ մարդկութեան սիրոյն . այլ գոնէ մեզմէ ընդունածըստակներուն եւ պատիւներուն փոխարէն \* :

Գ . ԱԶԳԱՅԻՆ ԿԸՆԴԱՎԸՐԱԴԹԻՒՆ . ինչպէս որ ամեն ուրիշ ազգեր նմանապէս մեր ազգն ալ միշտ ազգային կառավարութիւն մը ունեցած է , այլ սակայն եթէ ոչ կղերին , չեմ գիտեր ուրիշ ի՞նչ զօրաւոր պատճառաւ յիշեալ կառավարութիւնը մինչեւ հիմա չէ կարողացեր ուսանիլ իւր պաշտօնին պարտաւորութիւնները , եւ հետեւաբար այս կամայ եւ կամ ակամայ :

\* Եթէ կղեր մը կքարողէ դժութիւն և ինքն անգութ է՝ մեծիրաւունք կուտայ տգէտ և անուսումն ժողովուրդին որ կասկածի կրօնքի Ճշմարտութեան վրայ , խորհելով թէ « եթէ կղերին քարողած կրօնքը իրաւ Ճշմարիտ է , հապա ինչո՞ւ ինքն առաջքէն . ակիր կրօնական պահանջումներուն » :

գիտութեամբ եւ կամ ագիտութեամբ տեղի ունեցած պարտազանցութեան պատճառաւ ազգերնիս իւր արդի խղճալի կացութեան հասած է, վասն զի որ եւ իցէ ազգային կառավարութեան մը առաջին եւ գլխաւոր պարտաւորութիւնն'է իւր սլաշտպանութեանը յանձնուած ժողովուրդին հարկ եղած խնամքն ու հոգն տանիլ, որպէս զի անոնք անպաշտպան եւ անկառավար մնալով չի ցրուին : Ժողովուրդ մը ոչխարի հօտի մը կ'նմանի, եւ թէ որ հովիւք եւ շունք նորա վրայ հարկ եղած հսկողութիւնը չընեն եւ զանի բարեբեր եւ խոտալից դաշտերու եւ մարդագետիններու առաջնորդելու տեղ՝ կամ բոլորովին երեսի վրայ թողուն եւ կամ զանոնք անբեր եւ ժայռոտ հողերու վրայ տանին՝ հարկաւ խեղճերը մեծամեծ կորուստներու ենթակայ պիտի լինին, գայլերէն սիխտի յափշտակուին, եւ քաղցութեան պատճառաւ ամեն գտածնին ուտելով պիտի ջարդուին եւ բնաջինջ լինին .

Արդարութեամբ խօսելով մեր Ազգային հին կառավարութիւնը թէ եւ կղերէն շատ աւելի բարիքներ ըրած են Ազգութեան, սակայն տգիտութիւններնուն պատճառաւ չեն կարողացեր նկատել թէ Հայ ազգը թշուառ ապագայէ մը փրկելու համար ի՞նչ պարտէին ընել, եւ որովհետեւ մէկ կողմանէ կղերին անտարբերութիւնը եւ արծաթասլաշտութիւնը, եւ միւս կողմանէ ժողովրդեան իրենց իրաւունքը չի ճանչնալուն համար պահած լուութիւնը՝ իրեն մոռցուցած էին իւր սլարտաւորութիւնները, հետեւաբար ինքն ալ չէ թէ միայն պարտազանց գտնուած էր, այլ նաեւ սկսեր էր կղերին օրինակին հետեւիլ, եւ ինքզինքը ընդհանուր ազգին տէր կանգնելու աշխատիլ :

Սակայն այս մասին վրայ երկարաբանելու կարեւորութիւն չի կայ, քանի որ հայն այժմ ճանշցաւ իւր իրաւունքն եւ իւր ներքին կառավարութիւնը բարեկարգելու ձեռք զարկաւ, եւ մենք մեծ յոյս ունիմք

թէ Ազգային Սահմանադրական կառավարութիւննիւ , երբ իւր գործադրութիւնը սկսի , հարկաւ իւր առաջին գործերէն մին ալ դաստիարակութեան եւ կրթութեան այնպիսի եղանակ մը պատրաստել պիտի լինի՝ որով հեշտախտութեանց առջին առնուի մեր երիտասարդաց եւ օրիորդաց մէջ :

Դ . ԾՆՈՂՔ ԿԱՄ ԽՆԱՄԱՏԱՐՔ . ԾՆՈՂՔ կամ խռնամատարք այնպիսի փափուկ պաշտօնի մը կանչուած են որ ամենէն աւելի պատասխանատու լինելու են բնականաբար , ըստ որում ամեն անոնք որ իրը պատուաւոր եւ սկզբունքի տէր մարդիկ ամուսնական կենաց մէջ կ'մտնեն՝ հարկաւ մէկ որոշ եւ աղղեցութեան տէր լինելու վիճակ մը կ'ստանան , վասն զի այս վիճակով միայն կրնան իրենց շուրջը տղաքներ , աղջիկներ , թոռներ , հարսեր եւ փեսաներ եւայլն ունենալ , եւ հետեւաբար նոցա վրայ մէկ որոշ աղղեցութիւն մը : որուն օրինաւորութեամբ գործադրութիւնը հարկաւ բարի , իսկ՝ ապօրինաւոր գործադրութիւնը չար արգասաւորութիւններ կունենայ , եւ առ ալ կախումն ունի իւր մտքին եւ սրտին ունեցած համեմատական վիճակէն :

ԾՆՈՂՔ ամենեւին մոռնալու չեն թէ իրենք են միայն եւ գլխաւոր պատասխանատու իրենցմէ սերեալ արարածներուն բարութեանը կամ չարութեանը , ( ամեն երիտասարդք եւ օրիորդք որ պիտի ամուսնանան այս դասս ուսանելու են , եւ աւելի աղէկ է որ առանց այս պարտաւորութիւննին ճանչնալու ամուսնացող երիտասարդները եւ օրիորդները ինքզինքնին ծովը նետեն՝ թէ ինքզինքնին եւ թէ իրենցմէ ծնանելիքները թշուառութիւններէ ազատելու համար ) եւ կամ նոցա ապառնի երջանկութեանը կամ ապերջանկութեանը . եւ ուստի ամեն ծնողք որ օրհնուած են զաւակներով իրենց առաջին պարտաւորութիւնը սեպելու են նոցա բնական դաստիարակութիւնը , այսինքն ամեն ըանէ բնական դաստիարակութիւնը , այսինքն ամեն ըանէ

առաջ զանոնք այնպէս կերակրելու եւ հագուեցնելու են, մաքրութեան եւ ժուժկալութեան անանկ սովորեցնելու են որոնցմով նոքա առողջ կազմութիւն մը ունենան : Ըստ որումսկտք է գիտնալ որ պատանի մը կամ աղջիկ մը մինչեւ որ բնական առողջութիւն չունենայ, մինչեւ որ մաքրութեան եւ ժուժկալութեան սովորած չլինի՝ անհնար է որ բարոյական եւ մտաւորական կրթութիւններ ստանալու տրամադիր լինի :

Արդ ամեն ծնողք որ կ'փափաքին իրենց սլաշտօնին պարտաւորութիւններուն հաւատարիմ լինիւ եւ իրենց զաւակներուն երջանկութեանցը պատճառ սլարտին նախ առողջապահական օրէնքներով խնամել զանոնք, որպէս զինոցա ուղեղը եւ սիրոց առոյգ կացութիւն մը ունենալով՝ բարոյական եւ մտաւորական դաստիարակութեան կրթութիւն առնելու յարմար լինի\* : Ինչպէս կ'ըսէ Ս-Վիշէն «կրթութիւնն ալ օրինաւոր ըլլալու համար պէտք է մարդուն ամեն մէկ մասնցը բացուելուն եւ զարդացմանը ջանք ըլլուի, նախ մարմնոյն առողջութեանը ու զօրութեանը հոգ տարուի» : Դարձեալ ուրիշ տեղ մը այսպէս կ'ըսէ, «տըզի մը պղտիկութեան ատենը աւելի իր մարմնոյն զօրութիւն տալու միջոցներուն միտ դնելու է՝ քան թէ իր մտքին զարդանալուն» :

Ծնողաց պարտաւորութեանց վրայ մեր կողմանէ այսչափս ըսելնուս յետոյ՝ հիմա քննենք թէ մեր երիտասարդաց եւ օրիորդաց ծնողքները ի՞նչ ընթացք

\* Թէ ծնողք իրենց այս պարտաւորութիւնները ի՞նչպէս կատարելու են քանի որ իրենք տեղեկութիւն չունին իրական կըթութեան վրայ . արդարեւ այս մասին կրնայի ամեն կարեւոր եղած հրահանգները տալ, սակայն տետրակնուս միջոցը չիներելուն համար Ս-Վ իշէնեանի մանկատածութիւն անուն գեղեցիկ գիրքը կըներկայացնեմ ամեն որդեսէր ծնողքներու, ուր այս մասին հարկեղած ամեն հրահանգ կրնան դանել:

ունին, եւ թէ նոքա իրենց սրդի ընթացքներովնին զաւակներնին մոլութեանց տէր չե՞ն մի ըներ. Յայտնի է ամենուս թէ մեր ծնողքները լիովին անտեղեակ ամուսնական եւ կենաց ծնողական պարտաւորութեանց. բնականաբար զմեղ ծնած են առանց նպաստակի, եւ հետեւարար մենք աննսլատակ ծնուածներս թողուած եմք պարագայից բերմանց անորոշ, տարտամ եւ խիստ շատ անգամ վտանգաւոր առաջնորդութեանը. Հայ ծնողաց մեծագոյն մասը ամենեւին ծնողական եւ ամուսնական պարտաւորութեանց վրայ չէ թէ միայն տեղեկութիւն չ'ունին, այլ նաեւ իրենց զանազան ընթացքներովնին եւ յիմարական հսկողութիւններովնին այնպիսի չարեաց պատճառ կը լինին որ խիստ թշուառ, վատառողջ եւ ապերջանիկ կընեն իրենց զաւակները. Նորասիրութիւնը՝ որուն ախուր արգասիքները ասկից առաջ նկարագրեցինք ամենէն աւելի պաշտպանութիւն ծնողքներէն զտած են. Ծնողքներէն՝ որոնք մեծ ջանասիրութիւն ունին իրենց անմեղ մանկանց սրտին մէջ այս մոլութիւնը մտցնելու, զանոնք զանազան տեսակ եւ գոյն զգոյն ժապաւէններով եւայլն զարդարելով եւ միանգամայն գովեստներ կարդալով անոնց գեղեցկութեանը եւ վայելչութեանը վրայ, առանց երբէք մտածելու թէ իրենց զաւակները ասանկով քանի մեծնան սիրահար պիտի լինին Նորասիրութեան, նախ ինքզինքնին գեղեցիկ եւ փառաւոր ցացնելու տենջանքով, եւ յետոյ կամաց կամաց ինքզինքնին ուրիշներու հաւնեցնելու փափաքով. իսկ ասկից ալ յառաջ գալիք հետեւանքները բացարութեան կարօտ չ'են.

Դարձեալ ծնողք մէկ անմեկնելի պատճառաւ մը շատ փափկասէր կ'մեծցնեն զաւակնին, զանոնք տաք եւ կակուղ հանդերձներու եւ անկողիններու սովորեցնելով, որոնցմով տղաք քանի մեծնան՝ այնքան աւելի փափկասէր կ'լինին եւ հետեւարար վատառողջ եւ հեշտասէր. եւ ինչու կըսէ Ավիչէն Տղին անկողինը

ՓԱՓՈՒԿ ՀԸՆԴԱՅ . բնաւ ծածկոցները ծանր ու հաստը չըլ-  
 լայ ասիկա տղին ՉՅՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ մը տալու պատճառ  
 կ'ըլլայ . վասն զի պէտք է գիտնալ թէ տաք եւ կա-  
 կուղ անկողիններու սովորող տղաք՝ չէ թէ միայն իրենց  
 ապառնի կենաց մէջ միշտ այս սովորութիւններնին կը  
 փնտռեն , եւ թէ որ չկրնան վայելել՝ ապերջանիկ կ'լի-  
 նին , այլ այս մոլութեամբ տղայոց ջղային կազմութիւ-  
 նը հարկ եղած զօրութիւնը չստանալով՝ շատ ենթակայ  
 եւ պատրաստ կ'լինին գիճութեան եւ հեշտական շռայ-  
 լութեան . ուստի ծնողք նայելու են որ կարելի եղա-  
 ծին չափ իրենց զաւակներնին փափկասէր չ'ընեն , եւ  
 ասոր համար աղեկ կ'ընեն թէ որ իրենց զաւակներնին  
 կարծր անկողնոյ եւ թեթեւ հագուստներու վարժեցը-  
 նեն , որով եւ անոնց ջիղերուն զօրանալուն պատճառ  
 պիտի լինին , որն որ շատ շարիքներու առջեւն առնելու  
 համար խիստ կարեւոր է մարդկային շինքին . Առանց  
 ալ եւս ծնողաց մանրամասն ապօրինաւոր եւ վտանգա-  
 ւոր ընթացքներու վրայ խօսելու՝ հիմա քննենք թէ  
 ծնողական արդի հոկողութիւնը օրինաւոր է թէ ոչ-  
 կան ծնողքներ ընդհանրասկէս տղէտ լինելով՝ հետա-  
 գրգռութիւն կոչուած այն հանգամանքին որ ամե-  
 նէն փոքրիկ մանուկէն մինչեւ ամենածերունի մար-  
 դոց վրայէն չի պակսիր , եւ որքան որ այս հանգաման-  
 քը օրինաւորաբար գործադրելով , շատ օդտակար է  
 նոյնքան ալ վտանգաւոր՝ երբ ապօրինաւորութեամբ  
 գործադրուի . այնպիսի յիմարական ընթացք մը ունին  
 այս մասիս մէջ որ՝ սկատանիք եւ աղջիկներ բնականէն  
 շատ կանուխկարթննան . վասն զի ինչպէս որ յայտնի է  
 երբ տղայ մը կ'արգիլուի աղջկան մը հետ տեսնուելէ .  
 հարկաւ արգիլեալ տղան կամ աղջիկը պիտի սկսի խոր-  
 հիլ թէ ի՞նչ սկատճառ կայ . իրեն որ չի տեսնուի այն  
 ինչ տղուն կամ աղջկան հետ , եւ հետեւաբար իւր այս  
 հետաքրքրութիւնը յագեցնելու համար ամեն ջանք ՚ի  
 դործ պիտի դնէ . եւ որովհետեւ հրամանը ծնողական

է, սլիտի ստիսլուի անոնցմէ զատ օւրիշներէ տեղեկութիւն փնտռել, եւ ասանկով շատ անդամ սլիտի ուսանի այն բանը՝ ինչոր չպիտի ուսանէր թէ որ պատանեաց եւ աղջկանց մէկզմէկու հետ ունեցած յարաբերութեանց արգելք մը չինէր. վերջապէս երկու սեռէ եղող տղաքները մէկզմէկու հետ խաղալու, խնդալու աշխատելու են, եթէ ոչ ծնողական այս յիմարական հսկողութենէն մեծամեծ չարիքներու յառաջ գալն անպակաս պիտի լինի. ես ինքս երր տասն եւ մէկ տարեկան եւ կատարեալ անմեղ տղայ մըն էի, մեծ համակրութիւն ունէի մեր դրացիին աղջկան հետ, անանկ որ շարունակ կուզէի որ նորա հետ խաղամ եւ խնդամ. որ մը կին մը, որ իմ խնամատարու էր, անխոհեմաբար գլուխը խաղացած սենեակնուս դռնէն ներս մտցուցած մեղ կը դիտէր. երբ ես աչքս վերցնելով իրեն նայեցայ՝ մէկէն գլուխը քաշեց եւ հեռացաւ. այս փոքրիկ անխոհեմութիւնը արդարեւ շարժեց իմ հետաքըրքը րութիւնս, եւ ուզեցի գիտնալ թէ ի՞նչ պատճառաւ մեղ կը դիտէր. ուստի անմիջապէս իրեն դիմեցի, եւ իւր ըրածին բացատրութիւնը խնդրեցի. բայց անմիտ խնամատարս չկրնալով գուշակել իւր ըրածին արգասիքները, փոխանակ ուրիշ բան մը ըսելու, անմիջապէս հրամայեց ինձ որ ԱՌԱՆՉԻՆ յիշեալ աղջկան հետ չի խաղամ. որով եւ աւելի գրգռեց իմ հետաքըրքը թիւնս, եւ պատճառը հարցնելու ստիպուեցայ պատճառը ըսաւ նա՝ քիչ մը մտածելով, «Այն աղջիկէն ես կ'վախնամ, դուն անոր հետ մի խաղար». ես հնազանդ տղայ մըն էի, եւ արդարեւ հնազանդեցայ իրեն, եւ ալ ես այն աղջկան հետ առանձին չի խաղացի. սակայն սիրտս գոհ չէր, միշտ կուզէի գիտնալ թէ այս արգելքն ի՞նչ սլատճառաւ եղաւ, օրեր անցան բայց հետաքըրքը թիւնս չանցաւ, եւ որոյ ձեռքէն ազստելու համար ինձմէ մեծ տղայէ մը օգնութիւն խնդրեցի ամեն բան անոր պատմեցի, եւ հարկ չկայ ծածկելու


թէ անկից ուսայ այս մոլութիւնը , որոյ վտանգաւորութեան նկատման այժմ կ'աշխատիմ ուրիշներն համոզելու :


Հոս արժան է յիշել թէ ես գիճութեան երեսէն շատ վսաս չի տեսնելուս պատճառը իմ մէկ եղբայրս եղաւ , որ անմիջապէս նկատելով իմ վիճակս՝ ամեն հարկ եղած խրասներով զիս ետ կեցուց իմ մոլութենէս . եւ որոյ երախտիքը յաւիտեան շախտի մոռնամ :

Ահաւասիկ այս եւ ասոր նման ծնողական յիմար հսկողութիւնները խիստ շատ անդամ պատճառ կ'ըլինին երիտասարդաց եւ օրիորդաց հետաքրքրութիւնը շարժելու , եւ զանոնք վտանգաւոր տեղեկութեանց առաջնորդելու . ուստի ծնողք եթէ կ'փափաքին որ իրենց ապագայ սերունդին թշուառութեանը եւ ապերջանկութեանը պատճառ չլինին , թող սլատանեաց եւ աղջկանց , երիտասարդաց եւ օրիորդաց հետ մէկզմէկու հետ ունենալիք յարաբերութեանց դէմ արգելքներ չի դնեն , վասն զի առանկով միայն իրենք սլատճառ կը լինին նոցս ապօրինաւոր յարաբերութիւններուն :

Հաւանական է թէ ոմանք որ իմ այս խօսքերս կը կարդան , պիտի հարցնեն թէ , « Արդեօք ամեն ծնողք ազատ ձգելու են իւրեանց զաւակները , որ ուզածներնուն հետ տեսնուին եւ յարաբերութիւն ունենան » . Քաւ լիցի , ես այսպիսի խօսք մը չեմ ուզեր ըսել , վասն զի այսքան մեծ ազատութիւն մի ալ երիտասարդները եւ օրիորդները բոլորսին անբարոյական ընելու կը բաւէ , այլ իմ տալիք հրահանգս սա է այս մասին՝ թէ ծնողք իրենց զաւակները այնպիսի ծնողաց զաւակներուն հետ յարաբերութիւն ընել տալու են , որոնք նաեւս իրենց զաւակաց ճշմարիտ կրթութիւն տալու ջանադիր են . Վերջապէս այս կէտիս վրայ մեր ունեցած սկզբունքին համառօտութիւնը սա է , թէ պատանիները եւ աղջիկները , թէ երիտասարդները եւ թէ օրիորդները , « բոլորսին ազատ ձգուելու են առանց ծնողական օրի-

Պատկեր Գ.





նաւոր հսկողութեան , եւ ոչ ալ անոնց ազատութիւնը բոլորովին խեղդելու է ապօրինաւոր եւ հետաքրքրութիւն շարժող հսկողութիւններով :

Ասոնցմէ ՚ի զատ սա ալ չեմ մոռնար յիշելու որ տըլաք ամենեւին իրենց ծնողաց եւ կամ ուրիշներու քով պառկելու չեն , այլ միշտ առանձին , եւ եթէ կարելի է զատ սենեակի մէջ , ըստ որում տղաք ծնողաց քով պառկելով անոնց վատառողջութեանը ենթակայ կը լինին . վասն զի շատ փորձերով հաստատուած է թէ տկար ծերունի մը երբ առողջ երիտասարդի մը հետ մի եւ նոյն անկողնոյ մէջ կը պառկի իւր տկարութիւնը նորա կուտայ եւ նորա առողջութիւնը ինք կ'ստանայ . տղաք մէկզմէկու քով պառկելու չեն որպէս զի թէ իրենց բնական ջերմութիւնը չի շատնայ եւ թէ ուրիշ մոլութեանց մէջ չիյնան . եւ աղէկ կը լինի թէ որ զատ սենեակի մէջ պառկին եւ ասոր պատճառը ծնողք թէ որ քիչ մը մտածեն կրնան գտնել :

Այս տետրակս կարդացող ծնողք արդեօքիմ ըսածներուս իրաւունք չպիտի՝ տան եւ դեռ պիտի շարունակե՞ն իրենց արդի ապօրինաւոր ընթացքը , եթէ այս սլէս է , ուրեմն մեր ապագայ սերունդը խիստ եղկելի կացութեան մը սլիտի հասնի . մանաւանդ քանի որ մեր արդի ընկերականութիւնն ալ զանոնք գիճութեան եւ հեշտական շուայլութեան մէջ յառաջացնելու վրայ է , իւր հազարումէկ սովորութիւններովը որոնց վրայ մանրամասն խօսիլ կարեւոր չէ . վասն զի ամեն մարդ կը նայ վկայել որ թէ առեւտրական եւ թէ ընտանեկան ընկերութիւններնուս մէջ այնպիսի գործքեր եւ խօսքեր տեղի կունենան որոնց անհրաժեշտ արգասիքը երիտասարդներուն եւ օրիորդներուն բոլոր մտադրութիւնը մէկ բանի մը այսինքն ցանկական զգացմանց վրայ ամփոփել է . ով չկրնար մակարելել թէ ինչ անթիւ չարիքներ յառաջ գալու վրայ են բոլոր այն պարագաներ ու առաջարկ առաջ գալու վրայ են բոլոր այն պա-

բահանդէսներուն, գիշերային ժողովներու եւ այլն եւ  
այլն զրօսատեղեաց անկանոնութիւններէն որոնց սա-  
տանան բարի ճանապարհ տայ որ ոչ Եւրոպական են եւ  
ոչ Զինական որոնց մէջ ամենէն անմեղ պատանիներ  
կտի կանանց օրս եւ կամ պարզամիտ աղջիկներ սրի-  
կայ մարդոց զոհ լինելու վրայ են ամեն օր. իսկ ըն-  
տանեկան ընկերականութիւննիս բնաւ օգտակարու-  
թիւն եւ օրինաւորութիւն չունենալէն 'ի զատ պա-  
տանեաց եւ աղջիկներու համար շատ անգամ ինասա-  
կար լինելու վրայ են. վասն զի փառք մինչեւ այսօր 'ի  
գործ դրուած ազգային դաստիարակութեան երբ քա-  
նի մը ընտանիք մէկ տեղ մը կը ժողվուին բնաւ օգ-  
տակար բանի մը վրայ չխօսելնուն 'ի զատ, այնպիսի  
ունայն, եւ սնոտի աբեխցը եխարանութիւններ կընեն որ  
շատ վտանգաւոր արդիւնքներ կունենան երիտասար-  
դաց եւ պատանեաց վերայ. վասն զի յայտնի է որ  
պատանիք եւ աղջիկներ երբ շարունակ զարդարանք-  
ներու, հարսնցուներու, փեսացուներու, եւ ասոնց նը-  
ման բաներու վրայ անկանոն խօսակցութիւններ կը-  
լսեն, հարկաւ ժամանակէն շատ կանուխ կարթնան. իսկ ասոր ալ հետեւանքները արդէն յայտնի են:

Վերջապէս կարծեսթէ մեր ազգին ամեն սովորու-  
թիւնները միացած են գիճութիւնը նորասիրութիւնը եւ  
հեշտական շոայլութիւնը յառաջացնելու եւ հետեւարար  
ապառնի սերունդներնուս համար զարհուրելի ապագայ  
մը պատրաստելու. ով որ խիղճ աւնի նէ թող ողբայ ու-  
րեմն մեր քաղցրիկ սակայն արդէն մահուան խաղա-  
լիք եղած աղդերնուս վրայ :

## ԳԼՈՒԽ ԶԱՐՅՈՒԹ

ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌԵԱԼՆԵՐ ԵՒ ՀՅԱՊՈՒԹԻՉ ՀՐԵՇՆԵՐ

Մէկտհաճելի վհատութիւն մը սրտիս մէջ մտած զիս  
տագնապելու սկսած է այս դլուխս սկսելէն առաջ, վասն  
զի խիստ աղէկ գիտեմ որ հանրութիւնը շատ դժուարաւ  
պիտի ուզէ ինձ հաւատալ երբ իրեն իմացնեմ թէ մեր  
երիտասարդաց եւ չափահասներնուս շատերը կենդանի  
մեռեալներ են եւ բնաւ օգտակարութիւն չունին մեր  
ընկերականութեանը . ըստ որում մեր ազգին արական  
մասէն գրեթէ ինը տասներրորդը գիճութենէ եւ հեշ-  
տական շռայլութենէ յառաջ գալիք հիւանդութեանց  
ձեռքն գերի ինկած են, որոնց մէկ մասը ջղային զա-  
նազան տեսակ հիւանդութիւններով կը տանջուին, մէկ  
մասը Միզանցքաբորբոքումն ունին, շատերն ալ սերմ-  
նահոսութիւն իսկ մէկ մասն ալ այն ժանտալից Մա-  
շողական ախտովն բռնուած են որոյ ձեռքէն ազատիլ  
ԽԻՍՏ դժուարին է . իսկ մէկ մասն ալ ցաւալի է ըսե-  
լը որ վերոյիշեալ ամեն հիւանդութեանց մէկէն տէր  
եղած են . անհաւատալի գուցէ կը թուի քեզի այսը-  
սածս իմ սիրելի ընթերցողու, այնպէս չէ , շատ լաւ  
ուրեմն թէ որ կուզես համոզովիլ ըսածիս անմիջապէս  
քու խնամատարութեանդ յանձնուած պատանիները ,  
երիտասարդները քննելու ելիր որ տեսնես թէ անոնց  
մէջ հատ մը կրնաս գտնել որ այս հիւանդութեանց մէ-  
կուն ենթակայ չեղած գտնուի , նմանապէս հարցուր  
փնտոէ քու ընկերներուդ կացութիւնը որպէս զի հա-  
մոզուիս իմ ըսածիս : Այո՛ իմ սիրելի ընթերցողներս այո՛  
ձենէ շատերը տարակոյս չունիմ թէ յիշեալ ախտե-  
րուն կամ մէկին եւ կամ մէկ քանիին ենթակայ եղած  
էք 'ի վեաս հանրութեան եւ 'ի նախատինս մարդկու-  
թեան , ուստի կը խնդրեմ մի խոժոռիք ինձ դէմ երբ  
զձեզ կենդանի մեռեալներ կը կոչեմ, զի գիտցիք որ  
սրտիս ցաւն ու կոկիծը այս ածականը ինձ ըսել կու-

սայ որպէս զի սթափիք եւ ձեր կացութիւնը տեսնելով ժամ առաջ դարձանի վազէք եւ ձեր նախկին առողջութիւն ստանաք եւ ալ հեռու փախչիք գիճութիւնէ եւ հեշտական շռայլութիւնէ , մանաւանդ քարշիք այն հրապուրիչ ճիւաղներէն որ ամեն տեղ . ձեզ ըսպաննելու համար տուներ հաստատեր են , եւ որոնց հետ եղած յարաբերութիւններէն յառաջ գալիք արգասիքները անհնար է լիովին նկարագրել . ամենեւին չափաղանցութիւն ըրած չպիտի լինիմ թէ որ ըսեմ թէ անառակ կանանց նստած սենեակին մէջ զըտնուիլն անգամ վտանգաւոր է , ըստ որում այն գեղեցկադէմ եւ հրապուրիչ ժանտախտները ծծած օղերնին անգամ կը թունաւորեն . Այո՛ այն հրեշտակատեսիլ հրեշները որ արտաքուստ ամառուան լուսնոյ նըման կը փայլին՝ ներքուստ թունաւոր իժեր են ձեռքերնին ինկած որսը տարտարոսական անդունդներու մէջ գահավիժելու կարող . . . Երանի նորա որ բնաւ այս ճիւաղներուն հետ յարաբերութիւն չէ ունեցած , իսկ փայ նորա , որ նոցա մէկ ժպիտէն բերկրութիւն մը ըզգացած է իւր սրտին մէջ :

Արդարեւ կը շուարիմ եւ չեմ գիտեր թէ ինչպէս ստորագրեմ կենդանի մեռեալները եւ հրապուրիչ ճիւաղները . կենդանի մեռեալները որոնք իրենց ցանկան կրից սահմանը չի ճանչնալով զանազան տեսակ հեշտախտութեանց ենթակայ՝ լինելով եւ հետեւարար նոյն ախտից ձեռքէն ազատելու համար խել մը թունաւոր դեղեր խմելու պարտաւորեալ՝ բոլորովին կերպարանափոխ եղած են . . . որքան մեծ տարրերութիւն կայ մարդկային բնական շէնքին\* եւ ասոնց մէջ\*\* :

\* Տե՛ս պատկեր Երրորդ :

\*\* Տե՛ս պատկեր չորրորդ :

Նմանապէս հրապուրիչ ճիւաղները իրենց շարունակական անառակութեամբը այնքան կերպարանափոխ կը լինին որ մարդ հազիւթէ կրնայ իւր սոսկումը բռնել՝ ուր իգական ազնիւ սեռին բնական\* կազմութիւնը, ուր այս ճիւաղներուն կազմութիւնը\*\* . իմ սիրելի ընթերցողս թէ որ անառակ կանանց հետ յարաբերութիւն ունեցող մի ես, խնդրեմ խելքդ գլուխդ հաւաքէ, դատողութիւնդ ձեռք առ եւ ալ եւս մի խաբուիր քու անառակ սիրուհիներուդ արտաքին տեսքին, մի խաբուիր նոցա փառաւոր հանդերձներուն, մի խաբուիր նոցա շտկուած եւ փայլուն մազերուն եւ դէմքերուն, գիտցիր որ նոքա ամենեւին գեղեցիկ չեն . . . գեղեցկութիւնը բնութեան մէկ ընտիր սլարգեւնէ, որն որ անպատճառ ետ կառնու անոնցմէ՝ որոնք հեշտական շոայլութեան կ'հետեւին :

ԱՇ իմ սիրելի ընթերցողներս, կայ արդեօք այնպիսի թշուառութիւն մը աշխարհիս վրայ որ կենդանի մեռեալներուն եւ հրապուրիչ ճիւաղներուն թշուառութեանը հաւասարի . . . թշուառ չեն բնաւ զինւորք որ պատերազմի դաշտին մէջ կիյնան, զի նոքա հայրենասիրական առաքինութեան նահատակներն են . թրշուառ չեն բնաւ նոքա որ մարդասպանութեան պատճառաւ կախաղան կելլեն զի նոքա իրենց յանցանքին փոխարեն քանի մը վսյրկեան ցաւ կը քաշեն, թշուառ չեն բնաւ աղքատները, զի նոքա գոնէ սլատառ մը չոր հացուտելնուն վերջը սրտի խաղաղութեամբ կը ննջեն . . . շէ, թշուառները միայն անոնք են, անոնք՝ որ ոչ առողջութիւն ունին ոչ սրտի խաղաղութիւն եւ ոչ ալ առաքինութիւն, անոնք՝ որ ամեն օր բնութեան դժբնդակ եւ երկարատեւ հայուածներուն տակ կ'ձնշուին, անոնք, որ վերջապէս մահն անգամ դառնութեամբ եւ

\* Տես պատկեր առաջին :

\*\* Տես պատկեր երկրորդ :

տսնջանքներով կ'ձաշակեն : Կարեկցութեան չարժիմք ուրեմն այս թշուառներուն վերայ , ճայն բաձրացնեմք իրենց առջեւը եղած ահարկու վիրապները իրենց յայտնելու :

Ո՛ կղեր , առաջին պարտաւորութիւնը քու վրադ կիյնայ այս մասին . արթնցի՞ր ուրեմն 'ի սէրն Աստուծոյ եւ մարդկութեան , քարոզիչներ հանէ անառականոցները . եւ ազատէ այն խեղճ կիները որ զանազան ուրիշ պատճառներէ աւելի տգիտութեան պատճառաւ իրենց արդի ընթացքը բռնած են , ազատէ նաեւս կենդանի մեռեալները խմացնելով նոցա իրենց թշուառութիւնը :

Եւ դուք ծնողքներ , ճանչցէք ձեր անհրաժեշտ պարտաւորութիւնը այս մասին , եւ այս վարկեանէս սկսեցէք այնպիսի ընթացք մը բռնել որ փրկուի մեր ազգին երիտասարդութիւնը եւ ապագայ սերունդնիս : Աղերսանքով կ'դառնամ նաեւ ազգային արդի կառավասութեան եւ կը խնդրեմ որ նա ալ այս չարեաց առջին առնելու եւ արդեն թշուառութեան մէջ գտնուողներն փրկելու համար՝ հարկ եղած միջոցներն ձեռք առնու , կղերին իւր պարտաւորութիւնը ճանչցնէ եւ գործադրել տայ . ամուսնութեան միջոցները դիւրացնէ , նորասիրութիւնը ջնջելու միջոցներն ձեռք առնու , եւ ուսումնական խորհրդոյ մը ձեռամբ մարդակազմութեան եւ առողջաբանութեան գիտութիւնները տարածէ . դասսարաններ եւ լսարաններ թող հաստատուին ուսմանց եւ գիտութեանց մէջ հայ հասարակութիւնը յառաջացնելու որ հետեւաբար տգիտութեան երեսէն նոցա կրած թշուառութիւնները վերնան :

Յուսամ թէ մեր տկար գրշին ճայնէն աւելի ազգերնուս արդի կացութիւնը ի գութ պիտի շարժէ իմ ընթերցողներս , եւ ամեն անհատ սլիոփի ճանչնայ իւր ունեցած պարտաւորութիւնները այս մասին մէջ , եւ իմ աշխատասիրութիւններս պարապ տեղ եղած պիտի

չլինին . ո՞յ ոսկի եւ փառք չեմ խնդրեր ես , ոչ ալ վաղանցիկ համբաւ , այլ իմ ազգիս՝ իմ սիրելի ազգիս , իմ թշունտ ազգիս փրկութիւնը . ուրեմն կ'աղաչեմ ամեն ազգային հեղինակներու եւ ուսումնական բժիշկներու որ ինձ հետ ձայնակցին եւ ուժ տան իմ առաջարկութիւններուս եւ աշխատասիրութիւններուս , որով աւելնայ արիութիւնս եւ չիպարտաւորիմ դլուխս ծռած լրութեան մէջ թաղուելու :

Խօսք կուտամ ընկերական եւ ընտանեկան օրագիր մը հրատարակելու թէ որ ճշմարիտ ազգասէրներէ բաղկացեալ ընկերութիւն մը կազմուի նորասիրութիւնը ջնջելու եւ պարզասիրութիւնը ազգերնուս սիրելի ընելու , խօսք կուտամ մեր ընկերական եւ ընտանեկան ամեն տեսակ պարտաւորութիւններուս վերայ շարունակ խօսել՝ եւ խել մը միասսակար սսվորութիւններնիս բացայայտել՝ թէ որ ինձ հետ միանան քանի մը ճշմարիտ ազգասէրներ եւ քաջալերութիւն տան ինձ . վերջապէս իմ բոլոր կեանքս միմիայն մեր ընկերական եւ ընտանեկան բարեացն համար գործածել կուխտեմ թէ որ մասնաւոր ընկերութիւն մը հաստատուի այս նպատակաւ : Ալլուեմ ահաւասիկ , յուսալով որ իմ առ ընդհանուր ազգութրած աղերսանքս կը լսուի եւ ես իմ նպատակիս կհասնիմ որ է ՀԱՅ ԱԶԳԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՄՏՑՆԵԼ :

## ՎԵՐՋ



## ԳԱՂՏՆԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ


ԿԱՄ

ՍԿԶԲՈՒԹՔ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԾՆՆԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐ ԱԶԱՐԴ

Այս գիրքս յօրինուած է ամէն ամուսնացեալ

եւ ամուսնանալու միտք ունեցողներու համար .  
որպէս զի տեղեկութիւն ստանալով արական եւ  
իդական կազմութեան եւ նոցա պահանջած օ-  
րէնքներուն եւ ինսամքներուն վրայ , խելմը չարիք-  
ներ եւ թշուառութիւններ անձետանան մեր ըն-  
կերական կացութեան մասն Ա. Ի. Ա. Տ. Ա. Կ.



Այս տետրակս ալ Երիտասարդութեան նո-  
իրուած է . որպէս զի անով կատարեալ տեղեկու-  
թիւն ստանան գիճութեան ցաւալի հետեւաքնե-  
րուն . սերմնահոսութեան միզանցքաբորբոքման եւ  
մաշողական ախտից վրայ . եւ միանգամայն հըմ-  
տութիւն ունենան ամուսնական կենաց պահանջ-  
մունքներու :

—Թէ Գաղտնիք բնութեան եւ թէ Գերեզմանիք  
Երիտասարդաց անուն աշխատասիրութիւններնուս  
համար հարիւրաւոր շնորհակալութեան նամակ-  
ներ ստացած ենք . եւ խիստ ուրախ եմք յիշելու-  
թէ անոնք մեր յուսացածէն աւելի ծախուեցան եւ  
ծախուելու վրայ են որոնք կարդացողները արդէն  
մեծամեծ օգուտներ տեսան եւ տեսնելու վրայ են :

Թէ Վերոյիշեալ աշխատասիրութիւննիս եւ թէ  
այս տետրակս ամեն գրածախներու քով կը գըտ-  
նուին : Գաղտնիք բնութեան 15 դր . Գերեզմանիք  
Երիտասարդաց 3 դր :



## Ա Զ Դ

Թէ զիմութեամբ եւ թէ հեշտական շը-  
ռայլութեամբ որ եւ իցէ տեսակ հեշտախտու-  
թեանց ենթակայ եղողները , մասնաւոր նամա-  
կաւ կրնան մեզի իրենց կացութիւնը իմացնել  
եւ հարկ եղած հրահանգն կրնան մեղմէ ըն-  
դունիլ . արդէն հեշտախտութեանց դարման  
ընելու համարընտիր բժիշկ մը գտած եմք .  
իրենց վիճակը մեզի յայտնողներուն համար :

Իրենց հիւանդութիւնները մեզի յայտ-  
նողները կ'սկարտաւորին տարիքնին եւ ինչ  
սկարագաններով հիւանդութիւն ստանալնին  
մանրամասնաբար մեզ հաղորդել հետեւեալ  
հասցէով :

## ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

Կ . Պօլիս , Մէրձան Էօլիւ Զըքմազ խան  
թիւ և Գրասուն Պ . Յ . Մարգարեանի :





2013

